ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԱՐՕՆՈՅ

ԶՈՐ ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ՋԵՆՈՐ ԱՄԱՐԻ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1832 ՌՄՉԱ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Զենոբ այս աշակերտ սրբոյ Լուսաւորչին, և առաջնորդ ինն ակնեան վանիցն 'ի նմանէ կացեալ, հրամանաւ վարդապետին իւրոյ՝ որպէս ինքն իսկ պատմէ՝ գրեաց զգիրս զայս առ Երիցունս ոմանս յԱ-սորիս։ Ուստի հաւաստի թուի՝ ասորերէն զսա գրեալ. զի ինքն իսկ և առ որս գրէին՝ ասորիք էին. մանաւանդ զի և ասորի գրով վարէին յայնժամ մերք։ Եւ պատմէ 'ի սմա զերթ սրբոյ լուսաւորչին 'ի Կեսարիա, և զձեռնադրել նորա 'ի Զ. Լեոնդեայ եպիսկոպոսէ, զփոխադրութիւն նշխարաց սրբոյ Կարապետին, և զիրաց ինչ պատերազմի՝ որ 'ի կողմանս Տարօնոյ գործեցան։ Զրդ զսոյն պատմութիւն նոյն ինքն ապա մատենագիրն և 'ի Հայ բարբառ Երևի յեղեալ. քանզի այսպէս 'ի գլուխ գրոցս դրոշմեն գրչագիրք. Պատմութիւն Տարօնոյ, զոր Ներգմանեցաց Օնոբ Աստուծոյ։ Բայց եթէ զթարգմանեալն ոք փոխանակ պատմագրելոյ առցէ, և համարիցի զսա հայերէն գրեալ, և կամ յայլմէ ումեքէ յեղափոխեալ 'ի հայ, ոչ ինչ կամակորէ զնմանատ բառին։ Զի և բազում նմանութիւն գտանեն քննողք ընդ տիպս կերպարանաց բանից սորա և Յովհաննու Մամիկոնեանի. որով և ոչ վրիպեսցի ոք թերևս զնա կարծել թարգմանիչ գրոցս այս։

Որպէս գրեթէ՝ եամ շարագրածք 'ի ձեռն գրը-
չագրաց հասեալք առ մեզ, և առաւել սա ժամա-
նակաց երկայնութեամբ աղաւաղեալ գտանի։ Այլ
մեք 'ի ստուգագոյն օրինակաց զտպագիրս զայս արա-
րաք, հնգեակ օրինակաց բաղդատութեամբ ըստ կարի
ուղղագրեալ։ Ուրեք ուրեք էին և հատուածք ինչ,
որ թէպէտ յերիս և 'ի չորս օրինակս պակասէին,
այլ մեք ոչ թողաք զայնս 'ի բաց. որպէս զի մի զրկեսցին
հնախոյզք մերոյ աշխարհիս 'ի տեղեկութենէն՝ որ
'ի նոսա։ Այնաւանդ զի երևի ուրուք 'ի յետնոց զհա-
տուածսն զայնոսիկ կրճատեալ՝ ագահելով 'ի ժամա-
նակին և 'ի մագաղաթ, և այլոց ոմանց գրչաց 'ի նմին
օրինակէ փոխագրեալ. որպէս և այլ երկք հնոց յա-
ճախ իսկ զնոյն արկածս կրեցին 'ի պղերգութէ գրը-
չագրաց։ Բայց թէպէտ և համարիցին հատուածքն
այն յետոյ յաւելեալ, ոչ յետնոյ ինչ ուրուք թուին
յաւելուածք, այլ կամ նորին իսկ մատենագրին, և
կամ ուրուք 'ի յաջորդաց նորա, 'ի նորին վանիցն ա-
ռաջնորդաց։

ՉԱՐԱՐԱՅ ԳԻՐՔԱՅ

ԱՍՈՐԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆԱՅ

ՊատՃէն առաջին սրբոյն Գրիգորի զոր առաքեաց 'ի Կեսարիա առ Ղեւոնդիէ։

Զ ԱՌ Ի ՎԻՐՈՒՍՑ պատուեալ և 'ի մարդկանէ գովեալ, երիցս երանեալ տեառն և աստուածարեալ սրբոյ հայրապետիդ Ղեւոնդեայ, մեծարգոյ [1] և պատուական հոյակապ քաղաքիդ Կեսարիան քահանայապետ, առ 'ի ձեր սրբոյ ձեռնադրութենէդ և 'ի մեր փանաքիմացութենէս առաջին թուղթ՝ ողջունիւ և սրբութիւ հասցէ ձերում փառաւորութեանդ, և ապա բոլոր տիեզերաց։

Յոյժ գոհանալիք զնայ, որ հայրախնամ ողորմութեամբն իւրով գթացաւ յազգս մարդկան ի ջնամբ Որդւոյ իւրոյ միածնի. որ զնամ աղինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաքելական քարոզութեան, յորում այսմ աշխարհի կարի առաւել մասն պարծանաց եհաս։ Զ ի երկոքեան ամոլքն ասա եկեալք, և սորին սահմանի վիճակի՝ Հոգւոյն քանիւ 'ի ձեռն նորին հնորհաց. որ թէպէտ և առ նոքաք վերջացան 'ի Ճշմարտութիւն, սակայն կամք ողորմութեն

1 'Ի միում ձեռագրի Մեգալոս։

ՅՍ գԹացաւ առ մեր Նուաստութիւն. ըստ որում և գործեաց սքանչելիս 'ի մերում ժամանակի, որ զօրինակն դուք 'ի մեզանէն իսկ լուայք և ծանեայք։ Ա՛նաւանդ կրկին գոհութիւն ձեզ ՅՍ մատուցանեմք, առաւել և ձեզ օրհնութիւն, զի զդանձն կենաց շնորհեցէք երկրիս Հայոց, զմիջնորդն ՅՍ և մարդկան զնշխար սրբոյն Յովհաննու Ա՛կլուտին. որով և ցնծայ յոյժ երկիրս Հայոց սորա գալստեամբն, որպէս և անդ Ռ՚ոմի գալստեամբն 'ի Յորդանան։ Նա զայս գիտութիւն ստուգիւ ձեզ ծանուցանեմք, զի որպէս Ռ՚ոմի իջմամբն 'ի Ջուրն՝ մահ կորեաւ, նոյնպէս և աստ 'ի սորա գալստեանն՝ դժոխոց դրունքն խորտակեցան։ Օ՛ի է աստ յերկրիս Հայոց 'ի ջորրորդ բաժինս և յերրորդ Հայոց աւարտին, 'ի լերինն՝ որ կոչի Տաւրոս, և հատեալ անցանէ[1] մինչև 'ի դրունս Պալ Հաւայ Պարսից. և առ սովաւ բնակի երկիրն մամիկոնէից, բաղում վայելուչ տեղօք, և ծառատունկ պիտոյից. որ և աստ իսկ որջացեալ էր մահ յերկուս տեղիս[2]։

Նա այնչափ որջացեալ էր 'ի միում վայրի, մինչև 'ի սրբոյ Հոգւոյն յայտնեալ՝ եթէ նա իսկ է դրունք դժոխոց, զոր ինքնակնեան կոչէն տեղոյն հնդիկք և պարսիկք։ Յոր պանծալին յոյժ բնակիչք երկրին վասն Գ՚իսանՀայ կռոցն, և նորին եղբօրն Գ՚ՀՄՀՄՀՄ

նի. զոր իբրև զանդիւտ մարգարիտ համարիմ զնոսա տուեալ ինձ։ Եւ ըստ սիրոյ մտերմութեդ քո զոր ունիս առ մեզ, աղաչեմ զի մի ևս ընձայս այլ մատուցանես ինձ։ Զի հունձք բազում են և մշակք սակաւք. այլ աղաչեմք զձեզ, զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ։ Յորոց մին մշակն, զոր ինդրեմք 'ի քէն, Աղեսազարոս է. և միւսն՝ եղբայր Յակոբայ ասորւոյ [1], զոր ընդ իս ածեալ՝ ձեռնադրեցի եպիսկոպոս մամիկոնէից տանն։ Եւ զդա յղեսցես, հանդերձ այլ մշակօք, մանաւանդ և զՍիմեթէոս ազգենացւոց եպիսկոպոսն յղեսցես. զոր դու իսկ գոն վեհիր զՀմտութեն դպրութենն, որ էր յոյժ իսկ պիտանի երկրիս մերում, օգնականութեան գտեալ 'ի քէն առ զօթիւք և խրատուց։

Ուստի և յարաժամ ձգնութեդ բազմաց օրինակ գոլով, և դաստիարակ եղով շնորհիւ Ամն, ողջ լիցիս բաւական բազմաց օգնականութեան 'ի Ամր, և մերոյ բարեխօսութեամբ. ամէն։

Պատճէն երկրորդ. պատասխանի գրոց սրբոյն Գրիգորի. զոր յղեաց Կեսարու Հայրապետն 'ի Ժամ վանականի իւրոյ։

ԱՐՔԱՆԻԿ և ՈՃԱՐԵԱԼ ՏԵԱՌՆ ԵՂԲՕՐԴ.

Արքան առ մեզ՝ որ և ուրախարար գիր քո, և յոյժ անթերի ուրախութիւն լցոյց զվշտագնեալ անձն իմ։ Որ թէպէտ վասն տրտմութեան հասանելոյ 'ի վշտի էի, սակայն շարժեալ զմեր դանդաղութիւս ձեր գոհունեանն. զոր ընթերցեալ՝ գոհութիւն մատուցի ՈՒՅ ըստ գրեցելոյ 'ի քէն, որ ոչ անտես արար ՈՃ զաղգս հիւսիսական. որք զրկեալք բազում ժամանակս 'ի ձշմարտութենէն, զմոլորեցուցիչս իւրեանց ՈՃ հատա-

1 Յերիս օրինակս Ե գրան՝ ընտրեալ յԵռնադրէցի եպիսկոպոս՝ եղբայր Յոյնքոյ ասորւոյ ևն։

ըէին։ Եւ զայն ուսոյց նոցա հակառակամարտն Հրշ-
մարտութիւն սատանայ. զի ընդ խաւար ընթացեալք,
զրկեալք լինէին յաստուածածանօթութենէն։ Ա.յլ
'ի դէպ եկեալ նոցա մարգարէին բան, թէ "Յողո-
վուրդ որ նստէր 'ի խաւարի՝ տեսին զլոյս մեծ աս-
տուածգիտութիւն"։ Որ թէպէտ 'ի վաղ իսկ ծագեաց
արեգակն արդարութեան ընդ արարածս, սակայն աղգքդ
քո 'ի տունջեան իբրև 'ի գիշերի զորմ խարխաբեալք[1]։
Ուստի և այժմ դեռ հայեցաւ 'ի դոսա ՈՒԾ, և էջ
փրկել զդոսա 'ի ձեռաց անմարմին Փարաւոնի. զի
վերագոյն գտար տանջանօք քան զՈՒսկէս՝ ոչ խնայե-
լով 'ի մարմնդ քո, մինչև ազատեալ հաներ յանա-
պատն Սինա յանկոխն գաղանաց, ուստի հալածա-
կան լինէին ցաւք և հեծութիւնք։

Եւ արդ քանզի քեզ ծագեաց արեգակն արդարու-
թեան Քրիստոս 'ի դոսա, և դու ընդրեցար 'ի տեղի ընդ-
ըեալոց սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոս-
սի, յիշեա զնոցա նահատակութիւն, և մի երբեք վեր-
ջասցիս 'ի շաւղաց նոցա. զի և չիք ինչ պատճառս, զի
ետ զդոսա ՈՒՐ 'ի շինել և ոչ 'ի քակել. քանզի և 'ի
սկիզբն իսկ է մուտ Կարապետիդ յաշխարհդ Հայոց։
Որ և զիմ անունս գրեսջիր 'ի քո դպրութեանդ. և
գրեսցես, զի և այնու մասն օրհնութեան ընկալայց
յետ քո։

Ա.յլ և խրատ բարեաց տամ ձեզ. զիննակնեան
տեղիսդ, զոր բարեբուղխ ասեն ոմանք, շինեսջիր զդա
բնակութիւն դասուց կրօնաւորաց։ Եւ կացուցանես
զդոսա ըստ օրինակի այսր կրօնաւորացս, զոր տեսեր
'ի մերում վիճակիս. զոր և 'ի սրբոյն Անտոնէ ուս-
ցիս զկարգ ՀՀնութեանն, զի ոչ իւիք պակաս է քան
զառաջինն Անտոն։ Օ որ և ես քեզ օգնութիւն համա-
րիմ զայն. զի զԱպիփան աշակերտ սրբոյն Անտոնի
հաւանեցուցի գալ 'ի նոյն ինանակնեան տեղին, ունե-
լով ընդ ինքեան ընդիրս արս քառասուն՝ ՀՀնաւորս
խարազնագլեստս, պարկեշտ վարուք և հրաժարեալս
յաշխարհէս. զոր առեալ կացուցանես զԱպիփան՝
դոցա և այլոց եղբարցդ վերակացու։ Եւ դրոշմեսջիր

1 Յերիս օրինակս Խորիսրէայ։

արձան յաւիտենից, զի մի ոք 'ի դաստակերտս կամ 'ի գիւղաքաղաքս զօրէն աղէքսանդրացոյն գործեսցէ, շինելով իւրաքանչիւր ումեք զտէրունական տաճարն, և առանձինն բնակել։ Այլ ժողովեսցես 'ի նոյն տեղի հարեւր արանց չափ, որոշեսցես 'ի նոսա գեւղս և աւանս մեծամեծս, որպէս զի պէտք վանացն 'ի նոցանէ վճարեսցի, և ինքեանք միայն աղօթից և ճշդնութեանն պարապեսցին։

Խրատեա և զիշխանսդ զայդոսիկ՝ լինել եկեղեցաւ զարդս, աղքատասէրս, կրօնաւորասէրս և երկիւղածս։ Իսկ զշինուածս մատրանն մի շինեսցես բնակութեան կրօնաւորացդ, այլ կացուսցես 'ի նմա քահանայս և քորեպիսկոպոս։ Որոշեսցի նմա դաստակերտս, և շինեսցես 'ի նմա աղքատանոցս. որպէս զի որք գայցեն 'ի բժշկութիւն, մի լիցի տրտունջ. որպէս առ դրան խորանին ենթեցուցանէին զուխտաւորսն։ Այս եմ ըստ այսմ օրինակի տուր գործել։

Բայլ վասն Տիմոթէի և Անղիազարու եպիսկոպոսացն, զոր յինէն աղաչանօք էիր խնդրեալ, նոքա յայնժամ էին գնացեալ՝ մինչ դեռ զբագինսն կործանեցեր, և մեզ հարցման պատասխան [1] էիք արձակեալ։ Բանզի Անղիազար գնաց 'ի քաղաքէ իւրմէ փախստական, զի յարեան [2] 'ի վերայ հերեսիոսմայրքն և հալածեցին զնա 'ի կողմանս Հռոմայ։ Իսկ զՏիմոթէոս լուայ թէ գնաց 'ի կողմանս Անրուսաղէմի վասն աւետարանին թարգմանելոյ 'ի հելլենացի դիր։ Այլ ես իսկ 'ի ցաւս մահու անկեալ կամ, և ոչ գիտեմ զկենացս յերկարութիւն. և վասն այսորիկ դանդաղիմ իսկ և գրել առ նոսա թուղթս։ Բայց դուք գրեցէք առ նոսա զնշան արանց [3] ձերոց և զտեղացդ վայելչութիւն։ Այս առաւել ստուգիւ գրեսջիք՝ եթէ զինչ էր պատերազմն ձեր և քրմացս, մինչ երթայիքն 'ի մէնջ։ Դարձեալ ցուցցես՝ զնշխարացն վայրս ծածուկ գրով, զի մի թերութիւն լինի լսողաց՝ կարծելով եթէ երևեալ ևս չէն։

1 Ցերկուս օրինակս դարձանէին։ Մեզոց։
2 Ցերկուս օրինակս՝ Ն յարեան։ Կ Ցերկուս օրինակս դուցէն, յայլ
3 'Ի չորս օրինակս ընդանէանին լուամ դուցէ, և 'ի մի այլ դուցէն։

Ա.յլ զմէնջ եթէ գիտել կամին զորպիսութիւնք, մնհաւ ակն ունիմք և կենաց վէճաբ։ Բայց թէպէտ և արտաքին մարդս մեր ապականի, սակայն ներքինն զնորոգումն կենաց սկսանի։ Եւ զմեր պակասութիւս տացէ՝ որ ՝ի ձեզ, զի զանձամբ առեալ հօտդ ՝ի բաւնաւոր փարախդ վերին Սիոնի փոխարկել. որով և աղօթիւք քոյովք և ՝ի մեր հօտս խնայեսցէ Տէր. զի յերևեալ հօտապետին, առցուք և մեք վարձս ընդ առաջին մշակացն։ Աղէ լերուք ՝ի տէր։

Եւ ՝ի իբրև դարձան պատգամաւորքն առ ՝ի Գրիգորիոս, ոչ գտին զնոսա ՝ի Տարօն. այլ անցեալ գնացին ՝ի կողմանս Հաշտէնից՝ յարարատեան գաւառն ՝ի Աղարշապատ քաղաք. և հանեալ զնամակն մատուցին առաջի ժողովրդեանն։ Ուր ընթերցեալ, տրտմեցան յոյժ հանդերձ թագաւորաւն. առաւել վասն հալածանացն Եղիազարու, և հեռանալոյն յերկրէն իւրեանց։

Եւ գրեաց ինքն և թագաւորն և գահերէց իշխանքն [1] յորեսին Եղիազարն Նիւստրացոց եպիսկոպոսն և Տիմոթէոս ագդենացոց եպիսկոպոսն օրինակ զայս։

Տեառն սիրեցեալ եղբարցդ, և հեռացեալ մշակացդ վասն բանին կենաց, ՝ի տէր ողջոյն ասեմք հանդերձ Տրդատաւն և ամ իշխանօքս։

Ա.մենացն որ, որ զնածային մշակուէին յանձն առնու, հալածական [2] պարտ է լինել. զի ոչ առ ամենեսեան ընդունելի է նորա քարոզութիւնն։ Որպէս այժմ զմէնջ իսկ լուաք, զի ելեալ էք ՝ի ձերմէ բնակութենէդ. յանձն առէք լինել օտար ՝ի վայրուց և ծանօթից, ոչ ինչ զմնաւ ածելով զպանդխտութեանն ժամանակս։ Ա.յլ դէմ եղեալ գնացէք, և ոչ գիտէք յով չոգայք։ Ա.րդ վասն պանդխտութեդ երանեալք ձեզ. իսկ վասն իմաստութեդ, ոչ։ Օ.ի մինչ գի-

1 Ցերիս օրինակս Իշխանն, յայլսում լուրեսին գահերէց Իշխանօքն։

2 Ցերկուս օրինակս հալածական, յայլսում ՝ի հալածանս։

տէլք զԹագաւորս քրիստոսական հաւատով լցեալ, և զաշխարհս յաճախաշտութիւն, յօտար և 'ի տարաբդէմ երկիրդ ընդէր եղէք հալածական. մանաւանդ զի գիտէք, եԹէ ամ գաւառաց եպիսկոպոս պիտոյ էն և քահանայս։ Օ՚ի Թէպէտ ոմանք, որք ուստեք ուստեք եկեալ էն ժողովեալ, բայց զի՞նչ էն այսոքիկ առ վեցհարեւր և քսան գաւառս Հայոց. որ և գաւառին մէն մի քահանայ կամ երկու լուկ Թէ հանդիպի։ Օ՚ի դեռ մանկունք երկրիս 'ի դպրոց էն, և ոչ ոք 'ի նոցանէ բաւականս քահանայութիւն։ Լսկ դուք զայդչափ բազում քահանայս առեալ՝ տաբրադէմ և հեռի ուղեղնացուք ետուք զձեզ, և արդ 'ի ձերում երկրիդ այլ չունիք դառնալ։

Լ՚պա աղաչեմք զձեզ, 'ի մէնջ մի՛ վերջանայք. այլ ամ վստահութիւն փութացարուք գալ զկնի արանցդ, զոր յղեցաք առ ձեզ։ Լ՚ու եԹէ զայցէք, զամ երկիրդ Լ՚կեղեաց և Հարքայ ձեր առաջի առնեմք. յոր վիՃակ և բնակեսջիք՝ ձեր եղբցի և որք զկնի ձեր, որչափ կենդանի էք դուք և մեք։ Լսկ երկիրն մամիկոնէից եԹէ հաՃոյ Թուեսցի ձեզ, որպէս և դուք իսկ ասէիք՝ եԹէ զիննակնեան տեղիսն ինձ տուր, և անդ զքո եղբայրն իսկ եմ ձեռնադրեալ եպիսկոպոս, և ըստ կարի աղաչանաց զանուն տեղւոյն փոխեցաք յիւր աւելի անունն։ Լ՚ու այնչափ ջերմագոյն է 'ի սպասաւորութիւն սուրբ Կարապետին, մինչ զամ շինուածս վանացն քարեկիր է եղեալ. և Թուի ինձ՝ Թէ մինչև 'ի մահ ումեք չկամի տալ։ Լ՚այլ մեզ ոչ է արժան առնուլ 'ի նմանէ, զի աշխատեալ է առանց այլոց սատարութիւն. ինքն շինեաց զեկեղեցին, զոր ես միայն հիմնարկեցի։ Սակայն եԹէ ինքն տայէ, 'ի մէնջ լիով է, զի այլ ևս յաւելում 'ի դաստակերտս։ Լ՚պա եԹէ զայն ոչ, սակայն ամ երկիրն առաջի ձեր է. զոր և տեսանէք տեղի վայելուչ, այն ձեզ. յորմէ ոչ ինչ պակաս գտանէք 'ի մէնջ քան զասացեալն։

Ողջ լերուք 'ի Տէր։

Յ Ի ԱՌԵԱԼ տարան զԹուղթն առաքեալքն այ-
նոքիկ, որք 'ի Կեսարիայն եկին. և տարան 'ի մէնջ
'ի Յերուսաղէմ և 'ի Կեսարիա, և դարձան՝ և ոչ գտին
անդ։ Եւ անտի եղեալ գնացին Յերուսաղէմ. և
չհանդիպեալ նոցա, տեղեկացան 'ի նոցանէ՝ եթէ
'ի Հռոմ գնացին երկոքեանն։ Եւ իբրև նոքա 'ի
Հռոմ գնացին, Յղիսազար 'ի Մինջագետս Բսորոց
էր գնացեալ վասն թարգմանութեան երկոտասան մար-
գարէիցն։ Իսկ Ռեկտոր և Պնաստաս և Գայիոս
Եգիպտոսի եպիսկոպոսքն իբրև տեսին զԹուղթն,
յոյժ ուրախ եղեն և խնդացին. քանզի նոքա հալա-
ծական շրջեին զկնի Յղիսազարու։

Եւ փութացեալ գրեցին զնոցն բանսն յայլ նա-
մակ, և յուղարկեցին առ Տիմոթէոս 'ի Կորնթոս.
և կոչեցին ընդ նմա և զՊիկոս սարկաւագն, որ
յոյժ հմուտ էր բազում դպրութեանն. և ինքեանք եկին
'ի Մինջագետս, և ոչ գտին անդ զՅղիսազարոս։ Բայց
դարձան Յերուսաղէմ. միւս պատճառ՝ վասն նորա,
և միւս՝ վասն քննութեան աղանդոյն Մենանդրեի. որ
և յայնժամ բազումք դեռ ունէին զնորա պղծութիւն։
Իբրև գնացին անդ, զՅղիսազար ոչ գտին. և 'ի նոյն
աւուրն վախճանեցաւ Յերուսաղէմի հայրապետն.
զոր հաճոյ թուեալ երուսաղէմացւոցն, առեալ ձեռ-
նադրեցին զԳայիոս Յերուսաղէմի հայրապետ. և
Ռեկտոր և Պնաստաս դարձան 'ի Կեսարիա։ Իսկ
Յղիսազար եկեալ, 'ի Ճանապարհին հանդիպեցաւ
սրբոյն Գրիգորի և Տրդատայ. և խնդացեալ յոյժ
դարձաւ զկնի նոցա մինչև 'ի Հռոմ քաղաք։ Եւ անդ
կացեալ բազում աւուրս, ապա խնդրեաց 'ի նշխա-
բաց սրբոց առաքելոցն մնան ինչ, զահեակ ձեռն Պե-
դրեի առաքելոյն և Պաւղոսու աւետարանչին։ Օ որ
առեալ, մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն
Հայոց. և Տրդատ անցեալ գնաց յաշխարհն իւր
յարարատեան քաղաք։

Իսկ՝ որպէս Գրիգոր մնաց ժամանակս ինչ 'ի Տարօն՝
ընդ իւր ունելով զնշխարս՝ որ առաքելոյն, դադա-

բեալ աւուրս քսան և հինգ 'ի վանս Պ.ղակայ յին-
նակնեան տեղւոյն Պ.իանեայ կռոցն, 'ի կայեան նոր-
խարաց սրբոյ Կարապետին։ Լ.ս առաքեաց զիշխանս
մամիկոնէից տանն, տեսանել տեղի վայելուչ և լեռ-
նաբնակ. զոր երթեալ խուզեցին աւուրս բազումս,
և ոչ գտին տեղի պատշաճ 'ի յամենայն գաւառսն,
և դարձան ունայն։ Իսկ 'որն Պ.րիդոր հրամայեաց
պաշտօնէիցն աղօթք առնել յերեկօրեայ. և ինքն
մնեալ յեկեղեցին, տարածեաց զձեռս իւր առաջի
նշխարաց սրբոց առաքելոցն և առաջի տապանի 'որ
Կարապետին, և խնդրեաց յայ այսպէս.

Տէր ՝ած բազմագութ և ողորմած, որ քննես զի-
բաւունս և պարգևես զողորմութիւն. որ յիշեցեր
զաղգս մարդկան զմոռացեալս 'ի գթութենէն քոց,
և ոչ բարկացար 'ի սպառ, և ոչ անտես արարեր յա-
ւիտեան. այլ կարգեցեր զիս 'ի պաշտաման քահա-
նայութեան այսմիկ, և ետուր մեզ ժամանակ՝ հատու-
ցանել իրաւունս առաջին հարցն մերոց, որք դիմա-
դարձ գտան 'որ աւետարանին քարոզութ։ Որոց տի-
բեաց մահ մեղաց և կորուստ ապականութե, և ըմ-
բռնեալ մահու՝ կապեաց զամենեսին ընդ անիծիւք,
արժանացուցեալ զնոսա դժոխոց կայանին. զորս հա-
ւանեցուցեալ չարն մնալ յունայնութե խրև 'ի ՝ Ճրշ-
մարտութենն։ Իսկ մեզ շնորհեցեր ծանօթս լինել
անուանդ քո, և ժառանգ արքայութեդ երկնից ընդ
սրբոց առաքելոցն. և արարեր խաղաղութի առ հե-
ռաւորս և մերձաւորս գալստեամբ միածնի քո, և
քարոզութե 'որ առաքելոցն, որք բաժանեցին զամ
արարածս շրջագայութե աւետարանին։ Պ.ռաւել
զորս յայսմ աշխարհի արարեր զկամն ողորմութեան
քո 'ի ձեռն սուրբ Կարապետին, որ բաժանեաց իւր
մարմնոյն զամ աշխարհս։ Պ.անաւանդ զի առաւե-
լապէս գթութիդ քո հաճեցաւ բնակիլ 'ի տաճարս
յայսմիկ, որ առաջին հիմնարկութենն շնորհեցաւ ինձ
յանարժանութենէ քումմէ՝ առնել 'ի տեղւոջս յայս-
միկ, յոր հիմն հաւատոյս մերոյ խարսխեալ մնասցէ
անդրդուելի մինչև 'ի վերջին օրն՝ յորժամ գաս և
նորոգես զսա անապական, դու 'որ։ Լ.ս միջնորդ է
սա ստուերի և ՝Ճշմարտութե, և դարձեալ նստելոց

է սա ընդ աջմէ միածնի քո 'ի փառս անձառելիս։ Դու, որ զօրութեաց, հայեաց յերկնից 'ի պատրաստ բնակութէ քումմէ, և յայտնեա տեղի բնակութէ նշխարաց սրբոց առաքելոցն քոց 'ի յերկրիս յայսմիկ 'ի գովութի մեծի տէրութեդ և 'ի պատիւ ածութէ քո, 'ի փառս ամենասուրբ երրորդութեանդ։

Եւ իբրև կատարեաց զաղօթսն, յայտնեցաւ նմա հրեշտակ ՏԵՐՆ և ասէ. Յարուցեալ երթիցես 'ի ստորոտ լերինն Տաւրոսի, և ցուցից քեզ տեղի՝ ուր հաձեցաւ որ բնակիլ սրբոցդ։ Եւ նորա խնդութիւն արտաքս եղեալ՝ էառ զնշխարս սրբոց առաքելոցն, և գնաց 'ի նոյն տեղի՝ ուր եցոյց նմա հրեշտակ ՏԵՐՆ. և աղօթեալ 'ի տեղւոջն, էառ պատրաստել զնիւթ շինուածոյն որ վկայարանին. և եդ անդ զբերեալ մասն որ առաքելոցն։ Եւ կարգեալ անդ պաշտօնեայս եկեղեցւոյն արս երկոտասան, և էառ զտեղին զայն Եղիա զարու, և անուանեցին զնա Եղիազարու վանք։ Եւ տօն մեծ կատարեալ 'ի տեղւոջն զօրն բնակութեան սրբոցն՝ հանդերձ աշխարհախումբ ժողովրդեանն, յորում բազում բժշկութիւք եղեն։

Բ.ԸՐԴ 'ի սոյն ժամանակս Ռեկտոր և Ընտաստաս 'ի Ռուզանդիա հանդիպեալ ոմանց՝ որք Մ.շտիշատն Տարօնոյ էին, անդ երթեալ տային նոցա զրոյց զառաջին պատերազմն՝ մինչ զայր որն Գրիգոր 'ի Տարօն, և թէ զիարդ դարձան նոցա ընդդէմ քուրմքն՝ որ 'ի տեղեանն Գիսանեայ։ Նոյնպէս և զերկրորդ պատերազմն՝ որ եղև ընդ Տրդատ և ընդ Իշխանն Հիւսիսոյ. զոր Յոյնք լուեալ, զարմացան ընդ քաջութէ արքային Հայոց Տրդատայ։ Օ այս ամ իբրև լուան Ռեկտոր և Ընտաստաս և Բ.քիւղաս և Մարկեղիոս, զարմացան. զտեղի առեալ անդ աւուրս ինչ, գրեցին թուղթ առ որն Գրիգորիոս օրինակ զայս.

ՍՐԲԱԶԱՆ և ածարեալ և փառաւորեալ Հայրապետիդ Հայոց մեծաց ողջոյն 'ի Տէր։

Զ.ԱՌ Ի ՍՐԲՈՑ Հայրապետիդ անթերի սիրով և հոգեխառն մտերմութէ զպատուական աջոյ գիր ընթերցաք 'ի Հռոմ քաղաքի. և յոյժ ուրախութէ

լցեալ՝ գոհացաք զնայ, և կամեցաք զկնի կոչնակացդ[1] գալ։ Բայլ պատճառ արգելմանս մերոյ Եղիազար եղև, որ ի Մելիգեոս շրջէր. զոր, եկեալ ի Հռոմայ, ոչ գտաք զնա անդ։ Բպա հարկ եղև վասն նոր բա և վասն տեղեացն Երուսաղեմի երթալ առ ՝ՐԷն Սիմաքոս. զոր ըստ այ տեսչութէն զԳայիոս Երուսաղէմի հայրապետն ձեռնադրեցին փոխանակ նորա, որ վաղճանեցաւ։ Եւ մեք աւասիկ եմք ի Թիւզանդիա. վասն զի ազգէնացոց եպիսկոպոսն գնացեալ է յԱղիպտոս, և ջանս ունի համոզել զնոսա ի խաղաղութի որք հալածական արարին զմեզ։ Բանզի գրեալ է առ մեզ, եթէ զքաղաքս եռուն ազգէնացիք ի յիմ ձեռս, բայց նիւստրացիքն ընդդէմ դարձան. արդ մնացէք դուք ի Թիւզանդիա, մինչև ես յայլ քաղաք երթամ։ Բրդ մեք վասն այդր դանդաղիմք գալ. զի երկիրդ հեռի է, և մեք անկար ի նուազ կէնացս և ի պանդխտութէնէ, և Թեկտոր տանջի ի ջերմութէս, և ՝ՐԷն Մարկեղէս աստ վատեալ է յաչացն։

Բայց արդ աղաչեմ զքեզ, երջանիկ մշակդ այ, զի հրամայեսցես միւմ ի պաշտօնէիցդ քոց՝ մեզ գրով առաքել զուցատրութի ձերում Ճանապարհորդութեան, և զգալն յերկիրդ Հայոց, և զառաջին պատերազմն՝ որ ի քրմաց անդի, և զերկրորդ գալն ի Հռոմայ, և զայն պատերազմն՝ որ ի հիւսիսականաց անդի, և զնշխարացն՝ զոր տարեալ ես՝ եթէ ուր եդեալ ես, կամ զոր պաշտօնեայս թողեալ ես առ նա. և եթէ ումեք յայտնի, որպէս ասէն ոմանք, թէ ոչ. և զԱրօնիդէս և զՆատան ուր ես թողեալ, որով պարծին եկեղեցիք նոցա սրբութի. և կամ թէ զինչ եղև Եպիփան աշակերտ նոցա, և կամ ուր Եղիազար և Օնոբ։ Օ այս ամ ստուգիւ գրեսջիր առ մեզ, աղաչեմք. և զի յերթալն մեզ առ Տիմոթէոս եպիսկոպոսն, մարթասցուք տեղեկացուցանել զնոսա գրով։ Բայս ամ մեզ պիտանի է, և ձեզ ոչ դանդաղելի։ Եւ շնորհք ՝Ցի հոգւոյն մնասցէ ի վերայ հաւատացելոցդ։

1 Յերկուս օրինակս ի-ընթանայդ։

Եւ իբրև ընթերցաւ զթուղթն սուրբն Գրիգոր, հրամայեաց Օ Ենոքայ Աստուծոյ գրել զառաջին պատերազմն և զերկրորդն ստուգիւ, և զնշխարացն՝ թէ ուր եղաւ, և զՆոտն և զԱրծնիդէս՝ թէ ուրպէս վարին, կամ ուր են։ Այլ յականէ յանուանէ, ասէ, զնշան բլրոցն և զլերինն և զարանցն, որ 'ի պատերազմին գրգռեալ՝ զկուռսն ոչ տային կործանել. զայս ամենայն պատմութիւն գրեսցես և առաքեսցես։ Իսկ Օ Ենոք աղաչէ սկիզբն առնել պատմութեանն նախ 'ի մահուն Յոսրովայ, և անտի ոճով գրել զամենայն։ Օ որ ոչ հաւանեցաւ 'ոչն Գրիգոր, այլ բաւական համարեցաւ զայն միայն գրել։ Օ 'ի ոչ է, ասէ, օրէն զայդչափ պատմութիւն Աստուծոյ թուղթն գրել, և յիշատակ Հայոց ոչ թողուլ. այլ միայն զոր ինքեանք խնդրեցին, զայն յուղարկեսցես գրով։ Օ որ հաւանեալ Օ Ենոքայ, առեալ գրեաց առ եպիսկոպոսս Աստուծոյ միայն լոկ զոր ինչ առ իւրեանց սահմանս ոչն գործեցան։

1 Յերկուս օրինակս զառաջին պատմութիւն։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԶԵՆՈՒԱՅ

ՅՈՒՅՑԱՆԵԼ ԶՊԱՏՃԱՌ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՆ

ՏԵԱՌՆ և սիրելի երջանիկ եպիսկոպոսացդ, 'ի Օնոբայ յանարժան ծառայէ առ ձեր սրբութիդ, և Հայաստանեայցս յոյժ սիրով ողջոյն 'ի Տէր։

ՅՈՐԺԱՄ պատուական աջոյ ձեռին ձերոյ գիր ընթերցաւ առաջի սրբոյ Հայրապետիս Գրիգորի, անթերի ուրախութիւն գոհացաք զնայ, զի դադարեաց հալածանքդ 'ի կողմանցդ յայդցանէ։ Այս իսկոյն ձեռն 'ի գործ հրամայեաց արկանել պատճէնին պատասխանւոյ, որչափ և հարցման ձերոյ էր գիր։ Օ՞ որ թէպետ և ոմանք արգելուլ հրամայեցին՝ չգրել պատասխանի վասն ձեր գալոյ, սակայն նա ոչ այնպիսի ածեալ զմտաւ, այլ անհապատնձ զձեր պատասխանին յիշել։

Այս դուք մի՛ ինչ աղարտէք զսակաւ պատմութիս, կամ եթէ Աղաթանգեղոս զայդ ոչ յիշէ. զի ես յառաջագոյն գրեցի քան զնա։ Այս որ զթագաւորաց ժամանակն չգրեցի, վասն զի՝ զնոսն Գրիգոր ոչ հրամայեաց այլ ինչ աւելի գրել քան զՀայցուածն ձեր. մանաւանդ զի պատշաճ համարեցաւ զարշակունի[1] և զքաջ թագաւորաց գիր թողուլ տանս Հայոց, և ձեզ պատճէն պատասխանւոյ գրել. զոր ինքն անուանեաց՝ զնոսն Գրիգոր զայս պատճէն՝ Աստորոց պատմութի։

Արդ ես սկիզբն այս պատմութեան զձերդ եդիս զՀարցումն։

1 Յերկուս օրինակս զարշունի։

ՅԵՆՈՒՐԷՑ ԱՍՈՐԻՈՑ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԹՂԹՈՑՆ ԱՍՈՐԻՈՑ

ԵՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՄՆ ԻՆՆԱԿՆԵԱՆ ՏԵՂԱՑՆ ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՅԱՐՁԱՆԱՑ

Ընդ ժամանակս Թագաւորութեանն Խոսրովայ որդւոյ Ա. աղարշոյ, վրէժխնդիր լինէր [1] Ա. ղուանայ եղբօր իւրոյ, և 'ի գոռալ [2] ընդ միմեանս երկուց թագաւորացն՝ արքային Հայոց և Պարսից, սաստկացաւ մնրտ պատերազմին, և զօրացաւ արքայն Հայոց. և սկսաւ ապականել զերկիրն Պարսից ամս տասն, և հիմն 'ի վեր ջանայր առնել սպանմամբ և գերուք։ Եւ եղև միջնորդ արքայն Հ'ենաց, և ոչ կարաց գրաւել զսիրտ նորա 'ի հաշտութիւն. այլ սովով և սրով հանեալ զվրէժս եղբօրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից։ Իսկ այր ոմն անուն Ներսակ, 'ի նոյն ազգէն արշակունեաց, խորհուրդ արարեալ առ արքայն Պարսից՝ գալ սպանանել զԽոսրով, և իւր վարձանս առնուլ զՊալհաւն Պարտաւայ։ Զոր յանձին կալեալ արքային Պարսից, ոչ ինչ վերջանայր Պարթևն 'ի սպանմանէն Խոսրովու. այլ յարուցեալ առնու զեղբայր իւր և զկին և զորդիս իւր, և սիրոյ պատճառաւ և փախստեան աղագաւ գայ առ Խոսրով։ Եւ

1 Յերկուս օրինակս մակոսան Ա. փանայ։

2 Յերկուս օրինակս Ն գոռալ. 'ի միում օրինակի գոռալոյ։

'ի կատարել երկրորդ ամին, մինչ դեռ կամէր արշաւել Յոսրով 'ի պարսիկս 'ի գարնանային ժամանակս, 'ի ժամ որսոցն մեկուսի առեալ զՅոսրով Նչակայ՝ որպէս թէ բան ինչ ունի ասել, յանկարծակի զէնս 'ի վերայ [1] յարուցեալ՝ զթագաւորն դիւթաւալ կացուցանէր։ Այլ ինքեանք ջրասոյզ եղեալ կործանեցան իւրայօքն ամենեքեանք, ոչ ժամանեալ 'ի Պարթևն։ Այլ թագաւորն Պարսից զօր մահուն Յոսրովայ տան կարգեաց, և զՊարտաւն մնացեալ ազգին տայր Նչակայ։

Երդ մինչ 'ի Պարսիցն դիմեալ գայր Նչակ յԵրուսաղեմ գաւառ 'ի Հանգիստ՝ որ առաքելոյն Թովմէոսի, ասեն զսրբոյն Գրիգորի յղուէին անդ լեալ. որ և զնորին մշակութեն ելից զկարգն։ Երդ մինչ 'ի խաղաղութիւն էր Յոսրով, այր մի որ կոչէր Բուրդար՝ 'ի նշանաւոր ազգէն Պարսից՝ ելեալ զկնի Նչակայ, և եկեալ մինչև յԵրուսաղեմ, և անդի ելեալ գնաց պանդխտել 'ի կողմանս Դամրաց։ Այլ եկեալ 'ի Կեսարիա, և առեալ իւր կին 'ի հաւատացելոց զմեծատան ուրեմն քոյր՝ անուն Այլթաղէ, և քեռն Սոփի։ Այլ կացեալ ամ մի 'ի Կեսարիա, և դարձեալ առ զկինն իւր Բուրդարս այս, և գնաց 'ի պարսիկս։ Զորոյ զհետ մտեալ Այլթաղեայ, հասանէ 'ի գաւառին այրարատեան. և դադարեալ 'ի Վաղարշապատ քաղաքի, մտանէր Սոփի ստնտու մանկանն Գրիգորի [2], և իբրև զդայեակ համարձակ մնուցանէր զմեր Լուսաւորիչն։

Երդ իբրև սպան Նչակ զՅոսրով, և դեռ յոգւոջ էր, հրաման տայր թագաւորն զազգատոհմն Նչակայ 'ի սուր սուսերի մաշել։ Իսկ Բուրդարս իբրև լուաւ զայս հրաման 'ի թագաւորէն, փութացեալ եմուտ առ Ներսեհ կինն Նչակայ, և առեալ զԳրիգոր 'ի գրկաց նորա, և ետ զնա ցկինն իւր Սոփի։ Իսկ զմիւս եղբայր նորա, որ կոչէր Սուրէն, մանկաբարձքն փախուցին 'ի դուռն Պարսից, և անդ մնաւ առ հօրաքեռն իւրում, որ էր կին թագաւորին

1 'Ի միում օրինակի 'ի Վերյուրոյցեալ։

2 Յերկուս օրինակս մանկամբ Գրիգորի։

Ջուանշրի Հեփթաղլի[1]։ Որ իբրև զարդացաւ, գնաց յերկիրն Ղենաց յետ մահուն Յոսրովուհեայ. և կացեալ անդ ամս տասն, թագաւորեաց անդ 'ի վերայ երկրին Ղենաց ամս իննեւտասն։ Զոր ոմանք համբաւեն՝ թէ Պգտն ասեն եղբօրն Դրիգորի, որ է Յակոբ. բայց ոչ գիտեն զստոյգն, զի Յակոբն այն հօրաքեռորդի էր սրբոյն Դրիգորի. և անուն մօրն նորա Յոսրովուհի։ Իսկ յորժամ մեռաւ մայրն նորա, և զթագաւորութիւնն բարձին 'ի հօրէ նորա Տիրանայ, զի եսպան զնա 'ի պատերազմի արքային Լ մնաց Ռեզէս, ապա Յակոբ հանդերձ քերբն իւրով Գ.սկդնեիւ մնաց անդ։ Եւ յետ ժամանակաց քեռորդի նորա գնաց յաշխարհն Դթաց, և անդ թագաւորեաց. զոր յետոյ Տրդատ ըմբռնեաց, մինչ առ արքային Յունաց էր։ Զի սա էր որ եկն 'ի պատերազմ 'ի վերայ Դիոկղետիանոսի արքային Յունաց, որպէս Գ.գաթանգեղոս պատմէ զայսոսիկ։ Եթէ ստուգիւ կամս գիտել զայսոսիկ, ո՛վ երանելիդ Ռեկտոր, ընթերցիր զթագաւորութիւն Հեփթաղլինեկայ հելլենացի գրով, և կամ զթագաւորութիւնն Ղենաց, զոր գտանես յԱւռհա քաղաքի առ Խարդայ[2] պատմագրի։

Իսկ Ռուրդար առեալ զկին իւր և զմանուկն Դրիգոր, գնաց զկնի աներոյն իւրոյ Նւթաղեայ յաշխարհն կապադովկացւոց. և տուեալ զնա 'ի դպրոց, ուսուցանէր սորի և հելլենացի դպրութիւն և լեզու, և վարժեալ լինէր ճծպաշտութիւն։ Իբրև եղև երկոտասանամեայ, այր ոմն ճծապաշտ՝ որ կոչէր Դաւիթ՝ ամուսնացուցանէր զնա ընդ դստերն իւրում, որ կոչէր Մարիամ։ Գ.ոդ իբրև եղեն նմա երկու որդիք, անուն անդրանկին Ս ըթանէս, և կրտսերոյն Ուրստակէս, մայրն եմուտ 'ի վանս կանանց, և կրտսերն գնաց զհետ Ճգնաւորի մի՝ որում անունն էր Նիկիմաքոս. իսկ անդրանիկն մնաց առ դայեակն իւր, և յետոյ ամուսնացաւ։

Եւ հայրն անցեալ գնաց առ Տրդատ՝ զհօրն պարտսն հատուցանել. և մնաց առ նմա մինչև նա թագաւորեաց 'ի տեղի հօրն իւրոյ. և վասն ոչ զո-

1 Յերիս օրինակս Ե-Ռաղի։ 2 Յերկուս օրինակս Բարդեան։

հելոյ կռոցն՝ 'ի մեծամեծ տանջանս մատնեաց զնա։ Իբրև տեղեկացաւ 'ի քեռոյ աներոյն Գրիգորի եթէ դա է որդին Զնակայ՝ որ սպան զՀայրն քո զՍոսրով, և նորա արկեալ զնա 'ի վիրապն նեռքին ամս հնգետասան։ Այլ յետ հնգետասան ամին դիւագնեալ ամ երկիրն Հայոց, և ինքն Թագաւորն 'ի մէջ վարազացն երթեալ դադարէր։ Իսկ 'ի հրամանէն այ եկեալ հանին զնա նախարարքն իւր. և նորա ելեալ ժողովեաց զնոսա առ ինքն, և հինգ՝ օր թողու զնոսա անտուաղ առաջի իւր կալով, լսելով զքարոզուն վարդապետութեն նորա։ Այս առաջին պահք եդաւ յաւուրս սրբոյն Գրիգորի. զոր 'ի Հռոմ Սեղբեստրոս հաւանեցաւ, և պահեաց ինքն և Կոստանդիանոս Թագաւորն, և ամ քաղաքն Եգիպտոսի. զոր և Զաջաւորք կոչեմք։

Այլ յորժամ լցան աւուրք պահոց նոցա, Թափեցան մորթ վայրենական խոզակերպին Տրդատայ, և դիւաբնակ մարմինք զօրաց նորա ընկալան զբժշկուն։ Այս ձեռն 'ի գործ արկեալ՝ ուսուցանէր նոցա շինել տունս տերունականս, և ասէ. Պարտ է քահանայս ածել, որ հովուեն զձեզ։ Իսկ հրեշտակ ոն հաւանեցոյց զնոսա, զինքն լինել նոցա հովիւ։ Զոր յանձն առեալ, տայ 'ի ձեռս նորա իշխանս և զօրս բազումս, և առաքէ զնոսա յաշխարհն կապադովկացւոց 'ի քաղաքն Կեսարիա, ձեռնադրել 'ի սրբոյ հայրապետէն Գ Եւոնդեայ։ Այլ ելեալք 'ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանէին ընդ գաւառն Բասենոյ, և գային Յերզնաւան Յկեղեաց գաւառին, 'ի կուռսն՝ զոր ինքն կործանեաց։ Այլ անտի երթեալք, մտին 'ի Կեսարիա։ Այլ ձեռնադրի 'ի մեծ հայրապետէն Գ Եւոնդեայ մեծաշուք պատուով. աբարեալ նմա մեծարանս, տայ նմա զոր նշխարս Աբրապետին Յովհաննու և զԹանագինեայ վկայի։

Բայց եթէ ոչ երեր 'ի Կեսարիա զնշխար Կարապետին. Յոհաննէս աւետարանիչն։ Մինչ էր նա 'ի Պատմոս կղզոյն, և եկն Յփեսոս, և անտի երթեալ Յերուսաղէմ՝ գտանէ զգերեզման նորա ըստ

1 Յերկուս օրինակս չիսան օր։

հրամանի տեսչութեամբ այ. և առեալ 'ի գիշերի զոր մարմինն Կարապետին Յոհաննու, և ետ ցՊողիկարպոս եպիսկոպոսն՝ որ էր աշակերտ իւր, և ետ տանել Յակոբոս յեկեղեցին՝ զոր ինքն շինեաց, և կոչեաց զանուն նորա սուրբ Աստուածածին։ Եւ յետ փոխման աւետարանչին՝ մնաց Յակոբոս զոր նշխարքն Կարապետին, մինչև 'ի ժամանակս Դեկոսի թագաւորի։ Եւ ապա 'ի ժամանակս նորա նստի Յակոբոս աշակերտ Գրիգենոսի Փարմելոս. և անտի հալածեալ եկն 'ի Կեսարիա, ընդ իւր ունելով զբոլորովին նշխարս զոր Կարապետին, բայց միայն 'ի գլխոյն։ Եւ եդ զնա 'ի զոր սիրեդոնն, ոչ 'ի ծածուկ՝ այլ յայտնի. և եկաց 'ի նոյն տեղոջն մինչև ցթագաւորուն Դիոկղետիանոսի։

Եւ 'ի գալ սրբոյն Գրիգորի 'ի ձեռնադրութիւն առ Գ եւոնդ Կեսարու հայրապետն, որ թէպէտ քաջումբ անգամ խնդրեաց սուրբն Գրիգոր զնշխարս զոր Կարապետին, ոչ էառ յանձն տալ. մինչև հրամանն 'ի տնէ առնոյր 'ի գիշերի վերջնումն՝ բաժանել և տալ զկէսն ցնա։ Եւ 'ի վաղուն բազում պատերազմունս սկսաւ լինել, մինչև նախարարքն կշռեցին քա հանայապետին երկոտասան հազար դահեկան, և այնպէս առեալ բռնութեամբ՝ եղին 'ի քաղաքէն. մինչ զի խորհուրդ առեալ իշխանն Ինգեղ տանն հարկանել զքաղաքն 'ի գիշերի հրով։ Զոր իմացեալ հայրապետին, համոզեաց զնոսա 'ի խաղաղութիւն. և փոխանակ երկոտասան հազար դահեկանին՝ ետ նոցա զնշխարս Թանագինեայ, և հազիւ կարաց արձակել զնոսա հաշտութեամբ և սիրով։ Ցայր և սրբոյն Գրիգորի երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա Հռոմայ հայրապետն։

Եղեալ 'ի Կեսարիոյ՝ մնայր ժամանակս ինչ 'ի Սեբաստիա, հաւաքել զդասս կրօնաւորաց։ Եւ զամենս վարդապետս կոչեր Աղեքսանդրիոյ, և հրաշազան պաշտօնեայս. յորոց մին Գկլաւիոս, զոր Դուռնայ դաշտին եպիսկոպոս ձեռնադրեաց. նոյնպէս և զայլս Աղուոյոց։ Որ և զիս իսկ ոչ եթող դառնալ 'ի Նիւսա տրա՝ հրաժարեալ յեղբօրէն իմմէ Եղիազարու։ Եւ անտի եղեալ անցաք մինչև 'ի Յորդան. և անդ թո

զաք զՍուրխնոս Եփեսացի՝ վարդապետ ամենայն դաս-
տառացն։

Այս մեք եղեալ անտի, ընդ Կարին և ընդ Հարք
կամեցաք անցանել։ Իսկ ոմանք յիշխանացն զգա-
ցուցին սրբոյն Գրիգորի, եթէ 'ի դաւառն Տարօնոյ
երկուս բագինս մնացեալ են՝ որ դեռ ձճնեն դիւաց։
Իսկ նորա դէմ եդեալ դայր, զի և զայնս քանդես-
ցէ. և եկեալ յերկիրն Պալունեաց յաւանն մեծ Գի-
սանէ 'ի քաղաքագեղջն Կուառս, ոմանք 'ի քրմացն
անդ հանդիպեցան։ Այս տեղեկացեալ յիշխանէն
Հաշտենից՝ եթէ առ վաղիւն կործանելոց են զմեծ
աստուածն Գիսանեայ և Գեմտրեայ, գիշերա-
գնաց եղեալ 'ի տեղի աստուածոցն, և լցին զգանձս
'ի տունս գեղանափորս։ Այս ինքեանք ազգ արարին
յԱշտիշատ 'ի քուրմն՝ եթէ ժողովեցէք արս պատե-
րազմողս, և փութապէս վաղիւն հասէք առ մեզ, զի
մեծն Գիսանէս 'ի պատերազմ ելանելոց է ընդ ու-
րացեալ իշխանն։ Նոյնպէս և զարմն Կուառացն
սրեցին՝ դարան գործել 'ի ցանկս այգեացն, և զո-
մանս յանտառն դարձուցին։ Այս որ գլխաւոր քուրմն
էր, անուն Ա.ռձան, և որդւոյ նորա՝ Գեմտոր, ա-
ռեալ զօրս՝ որք 'ի Կուառատանն էին՝ արս իբրև չորեք
հարեւր, և եղեալ 'ի վերայ լերինն՝ ուր հանդէպ
Կուառացն էր, և մնացին մինչև այլ զօրքն ուստեք
եկեսցեն նոցա յօգնականութիւն։ Այլեալ 'ի վաղիւն
անցանէին ընդ ստորոտ լերինն, զոր օրինակ սովոր
էին ասպատակել։

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ զիշխանն Ա.ռծրու-
նեաց, և զիշխանն Ա.նձեւացեաց, և զիշխանն Ա.ն-
գեղ տան, և սակաւ ինչ զօրու իբրև արս երեքհա-
րեւր, եղեալ յերրորդ ժամու ընդ բլուրն՝ ուր Ա.ռ-
ձանն էր թագուցեալ, և դային յանհոգս եղեալ,
մնաւ չունէին կասկածս։ Այս իբրև մերձ եղեն ընդ
ելս զառ'իվերին, յառաջ մատուցեալ Ա.ռձանն և
Գեմտոր, և հնչեցուցին զփողն պատերազմին, և
յանդգնաբար յարձակեցան 'ի վերայ։ Օ որ լուեալ
իշխանքն՝ ընդոստուն յոյժ. զի յորժամ լուան երիվ-
վարքն զձայն փողոցն, սկսան վրնջել և պատերազմ
յուզել։ Իսկ իշխանն Ա.նգեղ տան ձայն տուեալ ա-

սէր. Իշխան Ալունեաց, յառաջ մատիր և տես՝ գուցէ զոլոր հիւսիսոյ իշխանին էն։ Իսկ նորա երթեալ, և ոչ կարաց գիտել՝ թէ ո՞ր էն։ Դարձաւ և ասէ. Փախո զԳրիգորդ յանհոգս ուրեք, հանդերձ ընկերօք իւրովք. գուցէ ըմբռնիցեն զդա, և մեք ամօթ կրիցեմք 'ի թագաւորէն։ Այլ դու առաքեա զոր զինի զօրաց մերոց, զի դարձցին յետս. քանզի ռազմ է բազում զօրաց, և բազում դրօշք երևին փողփողեալք։

Իսկ իշխանն Անգեղ տան տայ զոն Գրիգոր 'ի ձեռն իշխանին Ամոկաց, և ասէ. Փութացո յամուրն Ողկան, մինչև տեսցուք՝ թէ զինչ լինիցի. և ինքն առաքեաց զինի զօրացն՝ ազդ առնել։ Իսկ իշխանն Ամոկաց առեալ զԳրիգորիոս, դառնայ ընդ զառ 'ի վայր բլերն՝ կամելով իջանել 'ի Կուառս։ Իսկ արք տեղւոյն սկսան զանց ձանապարհին պահ ունել. զոր տեսեալ սրբոյն Գրիգորի՝ թէ մեծ վտանգ է 'ի տեղւոջն, ի՝նչացեալ զնչխարս մերձ առ աղբեր մի յայն կոյս ձորոյն հանդէպ գեղջն, դնէր և նշանագրէր զտեղին։ Այլ ծածկեաց ՝ներ զնչխարսն, և ոչ ոք կարաց տեսանել մինչև ՝ներն Գրիգոր դարձաւ 'ի տեղին։

Իսկ արք գեղջն հետամուտ եղեն մեզ. և մեք հեծեալ յիւրաքանչիւր երիվարս, փախստական գնացաք յամուրն Ողկան. և յառաջեալ քան զնոսա մտաք 'ի նեղքս, քանզի ընդդէմ եկին արք տեղւոյն, և մուծին զմեզ 'ի նեղքս։ Իսկ արք գեղջն եկեալ անցին յայնկոյս 'ի քաղաքն Կուառս, և ազդ արարին նոցա զմինչ. զոր լուեալ յայսկոյս անցին, և զամրոցն սկսան պաշարել։ Իսկ մեր 'ի վարանս մտեալ, յղեցաք գիշերագնաց զոմն առ իշխանն Անգեղ տան, և թղթով ծանուցաք զկրսն։ Իսկ նորա չորեք հազար արանց ընտիր սուսերաւորաց առաքեաց. որք 'ի վաղուն եկեալ անցին յայնկոյս գետոյն։ Այլ յետ երից աւուրց պաշարեալ զքաղաքն աւերեցին, և զպարիսպն հիմնայատակ արարին, և զմարդիկ քաղաքին բերեալ 'ի Ամեղտի անցուցին։

Իսկ իշխանքն իբրև լուան՝ եկին 'ի վերայ բլերն, և տեսին զԱ՚ղձանն, զի արս չորեքհարիւր լսկ՝ թէ աւելի կամ պակաս՝ ունէր ընդ իւրն։ Ամաղվաղակի 'ի վե-

բայ յարձակեալ քաջ իշխանացն, 'ի փախուստ դարձուցանէին զԱրձանն. իսկ այլ զօրքն Հայոց իբրև լուան զձայն դուժին, վաղվաղակի ամենեքեան անդր 'ի բլուրն հասանէին։ Իսկ Արձանն յառաջ մատուցեալ՝ սկսաւ թշնամանել զիշխանսն Հայոց, և ասէ. Յառաջ մատիք, ո՛վ դենակորոյսք, և ուրացողք ըզհայրենի ածն, և թշնամիք բարեփառին Գիսանէի. ո՞չ գիտէք զի այսօր Գիսանէ 'ի պատերազմ եղեալ է ընդ ձեզ, և մատնեալոց է զձեզ 'ի ձեռս մեր, և հարկանելոց է զձեզ կուրութիւն և մահուամբ։ Իսկ իշխանն Արծրունեաց 'ի մէջ անցեալ, ասէ. Ո՛վ որ խրոխտասդ 'ի վերայ մեր. եթէ վասն աստուածոյն մարտնչիս, սուտ ես. և եթէ վասն երկրիդ, ինաւ իսկ անմիտ ես. զի այս իշխանն է Անդեղ տան, և իշխան Սիւնեաց տանն, և այլք 'ի պատուաւորաց՝ զորս դուք իսկ ճանաչէք։ Իսկ Գոեմեսոր որդի Արձանէն ասէ. Ի ուարուք մեզ իշխանքդ Հայոց. այս քառասուն ամ է՝ զի ծառայեմք մեծի աստուածոյն, և գիտեմք զզօրութիւն նոցա, զի ընդ թշնամիս պաշտոնէից իւրեանց ինքեանք մարտնչին։ Արդ մեք պատերազմաւ ձեզ չկարեմք ընդդիմանալ. զի այս տուն է թագաւորին Հայոց, և դուք իշխանք նորա։ Բայց այս ձեզ յայտնի լիցի, որ թէպէտ մեք ձեզ յաղթել ոչ կարեմք, սակայն լաւ է այսօր մեռանել 'ի վերայ աստուածոյն մերոյ՝ քան թէ զտաճար նոցա 'ի ձէնջ ապականեալ տեսանեմք, որով և զկենաս ատեցաք և զմահ սիրեցաք։ Բայց որ իշխանդ ես Անդեղ տան՝ յառաջ մատիր, զի մենամարտեսցուք ես և դու։

Յայնժամ 'ի մէջ անցեալ իշխանն Անդեղ տան և Արձանն, և սկսան անցանել շուրջ զմիմեանսիք. և ահապարեալ Արձանն ելհար տիգաւ 'ի վերայ բարձից նորա, և մերձ տարաւ յընկենուլ զնա։ Իսկ իշխանն դարձեալ 'ի վերայ նորա, ասէ. Գիտեա զայս, Արձան, զի տեղւոյս այս Արձան են կոչելոց. զի քեզ արձանանալ պիտի յայսմ վայրի։ Այլ 'ի վեր ամբարձեալ զձեռն իւր՝ ինքուցանէր զսուրն 'ի վերայ աջոյ թիկանցն, և 'ի բաց ձգէր զպարանոցն հանդերձ ձախ թիկամբն և ոտամբն։ Այլ նորա անկեալ յերկիր թաւալէր. և կուտեցին արձան 'ի վերայ նորա,

և կայ 'ի Թաղման 'ի նմին տեղւոջն՝ որ դեռ և ևս Բ.ը-ձան կոչի անուն լերինն։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, փուԹանակի եկին հասին զորքն քրմաց 'ի Ա իշապ քաղաքէ, և արք Պարտխոյ և արք Մեղտոյ ամենեքեան առ հասարակ անդր հասանէին։ Եւ այլք յԱ.ստղենից եկեալ ընդ նոսա, ընդ ամենայնն, որպէս և ինքեանք յետոյ ասէին, հինգհազար ջորեքհարեւր և յիսուն այր։

Իբրև հասին 'ի գլուխ լերինն, ձայն գուժեաց յերկոսեան գունդսն. և միաւորեալ դասք քրմացն ընդ միմեանս, յարձակեցան 'ի վերայ զօրացն Հայոց, և փախստական արարեալ ի ջուցին զնոսա զառ'իվայր լերինն ընդ գեղջն կողմանէ։ Իսկ արք գեղջն այնորիկ քանզի դարանամուտք էին, ընդդէմ եկեալ մերոց զօրացն, և յերկուց կողմանց 'ի մէջ առեալ զզօրսն Հայոց, սկսան կոտորել։ Իսկ իշխանն Ա.նգեղ տանն հերձեալ զքրմացն կողմն, և անցանէր յետուստ կողմանէ, և ուշ բերէր առնէր. զի անդ արք հետեւակք, որ զառ'իվերին կողմանէն էին, բազում մնաս արարին վիմաք երիվարացն։ Իսկ Ա.ՀեմեՀ իբրև եառեալ՝ էԹէ Ա.նգեղ տան իշխանն 'ի բլուրն էր, Թողեալ զզօրսն՝ ուշ նմա արարեալ, նոյնպէս և այլ զօրքն սկսան ձիախաղաց անդր ժողովել։

Իբրև էլին 'ի վերայ բլերն, Ճակատեցան դարձեալ առ միմեանս։ Եւ կային մնային իշխանքն մեր զօրուն իւրեանց, զի դեռ ամենեքեան չէին ժողովեալ. քանզի ջորեք հազար այր դեռ 'ի Մեղտի զգերիսն ունէին, իսկ երեք հազարն անցին ընդ Ասսեան և ընդ Հարք. իսկ այլքն դեռ 'ի դաշտի անդ սփռեալ ասպատակէին։ Եւ յորժամ Ճակատեցան առ միմեանս, և կամէին խառնել ընդ իրեար, ժամանեաց նոցա երեկոյ. և 'ի նոյն վայրի ի ջեալ բանակեցան մինչև ցառաւօտն։ Եւ իբրև առաւօտ եղև, եկին հասին 'ի նոյն տեղի մնացեալք [1] զօրուն Հայոց, և այլք ոմանք 'ի Տիրակատարն քաղաքէ, որպէս Թէ արք հինգ հարեւր, եկին օգնել [2] քրմացն։ Ա.ՐԴ իբրև հարստացան երկոքին

1 'Ի միում օրինակի մնացեալ զզրիւ զզրուն Հայոց։ 2 'Ի միում օրինակի յօգն քրմացն։

կողմանքն, և էին վեց հազար ինն հարեւր քառասուն և վեց արք քրմացն, իսկ հինգհազար և ութսուն զօրք իշխանացն Հայոց, ապա հնչեցուցին զփողս պատերազմացն, և դիմեցին իւրաքանչիւր այր 'ի դէմ առն դիպանաւորի. զառաջինն յաղթեցին զօրքն Հայոց՝ քրմացն։ Իսկ 'ի նոյն ցեղէն Դեմետրեայ իշխանն Հաշտենից, որ էր ընդ զօրսն Հայոց, կորեալ եօթն հարեւր արամբք 'ի քրմացն կողմ ելանէր[1]. և սկըսաւ կռուել ընդ իշխանս Հայոց։ Իբրև տեսին զօրքն Հայոց զնա, լքան և յերկիր կործանեցան. զի այնպիսի այրն այն յաղթող և հմուտ պատերազմի և կռուոլի, մինչ զի ամենայն իշխանքն Հայոց դողային 'ի նմանէ։ Եւ յանխնայ սկսաւ արեան Հապաղիս հանել. և ամենայն զօրքն զաղաղակ բարձին առ իշխանն Սիւնեաց։ Իսկ նորա ձայն տուեալ, ասէ. Ո՛յ գայլակորիւն, յիշեցեր զբարս հօր քո, և 'ի նոյն շաղղակերութի դարձար։ Իսկ նա ասէ. Ո՛յ արծուոյ ձագ, թեւօքդ ես հպարտացեալ. բայց եթէ 'ի շար[2] ակնատացս անկանիս, ես ցուցանեմ քեզ զիմ զօրութիւնս։ Իսկ իշխանն Սիւնեաց չանդուրժեաց առ թշնամանսն. յարձակեալ 'ի վերայ նորա, եհար մըրճոմն 'ի վերայ սաղաւարտին, և կտրեալ զնա 'ի զօրացն, և փախստական արար զնա 'ի վերայ լերինն ընդ արևելս կոյս։ Եւ հանեալ հանդէպ ինքնակնեան վայրուցն՝ մղեալ ընկէց յերիվարէն, և իջեալ՝ դանակաւ կտրեաց զգլուխ նորա. և զմարմինն դահավէժ արարեալ, ասէ. Տեսցէն զքեզ անգեղք, և զիտասցեն՝ եթէ արծուոյ հարեալ է զնապաստակդ։ Եւ ինքն դարձաւ։ Որ մինչև ցայսօր Արծուիք կոչեն տեղոյն։

Իսկ իշխանն Արծրունեաց 'ի մէջ անցեալ՝ կտրեաց զքրմապետն Աշիշատայ, որոյ անունն էր Արետակէս[3]. և տարաւ փախստական մինչև 'ի գլուխ լե-

1 Յերկուս օրինակս ընդ զօրսն Հայոց, հանդէրձ եօթն հարիւր արամբեւ յոյն կոյս էանց, և եղեն ընդ երդին Դեմետրեայ. և սկսաւ արամբեւ խորով կռուել։

2 'Ի միում և եթ օրինակի 'ի լոր անանպատս։

3 Յերկուս օրինակս պակասէր հատուածս որոյ անունն էր Մեսոպէս։ Իսկ զանուն քրմին ուղղեցաք Մեսոպէս որպէս յիշատակի 'ի տառս ըստ երից ձեռագրաց. զի երկու այլք ունէին Մեսոպէս։

ելին՝ ընդ դիտան վայրուցն։ Եւ իբրև եհաս նման, ընդդէմ դարձաւ Մետակէն, և եհար զբարձս նո-ցա. իսկ նորա ջեռեալ յարենէ խոցուածքին, աՀա-պարեալ կտրեաց զթիկունս, և պարանոցաւն 'ի բաց ընկէց, և զգի նորա դարահոս արար. զոր և Մետ-սակող[1] կոչէն զանուն տեղոյն։

Իսկ իշխանն Բ.ջուց[2] փախուցեալ 'ինոյն վայրս թա-գեաւ. զոր տեսեալ իշխանին Բ.ծրունեաց՝ որպէս թէ ընդ չտես[3] արար, և գնացեալ մերձեցաւ առ նա. և յանկարծակի յարձակեցաւ 'ի վերայ նորա։ Իսկ նորա փախստական եղեալ ընդ անդառն, կտրան փայ-տի էանց ընդ սիրտ նորա և ընդ լեարդն, և անդէն մեռաւ։ Իսկ նորա առեալ զերկոսին երիվարսն և դարձաւ. և անուանեցաւ տեղին այն Բ.ջուց ձոր։

Եւ իբրև դարձաւ անտի, եկեալ հանդիպեցաւ զի Ղեմեսոր և իշխանն Ինգեղ տան մարտնչէին ընդ մի-մեանս։ Եւ նորա 'ի վերայ յարձակեալ, կտրեաց զաջոյ ուս նորա, և 'ի վայր ընկէց. և կտրեաց զգը-լուխ նորա, և ձգեաց 'ի մախաղ իւր. և դարձաւ։ Եւ յարձակեալ 'ի վերայ զօրացն, յանխնայ կոտո-րեալ դիթաւալ առնէին իբրև արս հազար երեսուն և ութ. և զայլսն մերկացուցին։ Եւ 'ի նոյն պատե-բազմին եսպան Ղեմեսոր զորդի Մ'ոկաց իշխանին. որ և մեծ սուգ եհաս իշխանացն Հայոց։

Բ.ղդ իբրև մեռաւ Ղեմեսոր 'ի նոյն պատերազմին, հնչեցոյց իշխանն Սիւնեաց զփողս պատերազմին 'ի խաղաղութիւն. և լուեցին երկոքին կողմանքն 'ի կոտ-րելոյ զմիմեանս։ Զոր իբրև տեսին արք կողմանցն, որ քուրմքն էին, աղաչեցին զիշխանսն 'ի խաղաղուն, զի թաղեսցեն զմեռեալս իւրեանց. և թոյլ ետուն։ Եւ ժողովեցին զամ կոտորեալսն յերկոցունց կող-մանցն. և հատեալ գերեզմանս՝ լցին զնոսա 'ի ներքս, և կանգնեցին 'ի վերայ գերեզմանացն արձանս, և գրեցին 'ի նմա այսպէս.

1 'Ի միում ձեռագրի Մ Ե-սոյէս. 'ի միւս այլ Մ Ե-սոսոյղմ։

2 Յերիս օրինակս Ա.ջոյ։

3 Յերիս օրինակս «ոչ» ՝ի ընդ չտեսեալս արար։

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՈՐ ԵՂԵՒ ՅՈՅԺ ՍԱՍՏԻԿ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԼԽԱՒՈՐ ԱՐՁԱՆ ՔՐՄԱՊԵՏՆ ՈՐ ԿԱՑ ԱՅՍՐ Ի ԹԱՂՄԱՆ ԵՒ ԸՆԴ ՆՄԱ ԱՐՍ ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՈՒԹ ԵՒ ԶԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄ ԱՐԱՄԱՔ ՎԱՄՆ ԳԻՍԱՆԵԱՑ ԿՈՒՈՅ ԵՒ ՎԱՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օ այս գրեցին սասրի և հելլենացի գրով, և յոյն և իսմայելացի նշանաւ[1]։ Յս ինքեանք ինչին երեկոթս առնել յիննակնեան տեղջն. և փութապէս կոչնա-կան արարին սրբոյն Գրիգորի, և ինքեանք մնացին անդէն։ Ամանք 'ի գիտանոցն մնացին, և այլ զօրքն 'ի մարգՃակին ինչևանս կալեալ առ քաղցր աղբերն անտառին։

Լսկ մեք 'ի յամրոցէն ելեալ, եկաք ընդ նոյն Ճանապարհ ընդ որ փախստական գնացաք։ Իբրև եկաք 'ի վայրս գեղջն, մոլորեցաք. քանզի գիշեր էր։ Այց մինչ գեռ գայաք առ ափամբ այգեստանեացն, յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ առաւել քան զՃառագայթս արեգականն 'ի նշխարացն՝ զոր պահեալ էր սրբոյն Գրիգորի։ Յս այնչափ ծագեաց, մինչև ամ բնակիչք գեղջն 'ի դուրս ընթացեալ արք և կանայք ծերք և տղայք 'ի տեսիլն, և հիացեալք՝ սկսան զղջանալ։ Յս նոյնժամայն բարձեալ տարան զնրշխարան մինչև 'ի մէջ գեղջն, և պաշտօն ցնծութեամբ կատարեալ մինչև ցառաւօտն, և 'ի վաղիւն բարձեալ՝ եկաք յԱրձանն, և ընթերցաք զգիրն։ Յս բազում ժամն արտասուեալ սրբոյն Գրիգորի վասն 'ի զուր կոտորածին, և ապա առեալ զաջ թեւն Այրտչին՝ տեառնագրեաց շուրջ զամ կողմանքն գաւառին, ասելով. Յղիցի աջ ամն 'ի վերայ երկրիս այսորիկ, պահել 'ի թշնամեաց. և թէ վասն մեղաց տանջեցան 'ի ամնէ, սակայն թշնամիք սորա մի յերկարեսցեն, այլ չարեաւք սատակեսցին։ Յս մի հերձուածողք բնակեսցեն յայսմ աշխարհս. աջ սրբոյ Կարապետին է-

1 Յերկուս օրինակս սասրի և հելլենացի և յոյն գրով, և իսմայելացի նշանաւ։

ղնցի կնիք և պահպան, և միանգամայն եղնցի տունս այս շինուած յաւիտենական աղգաց յաղգս։

Եւ ասացեալ մեր զամէնն, ձայն դղրդի[1] եհաս յա կանչս մեր։ Եւ իբրև եկաք ինքաք յիննակնեան տեղնոն, ընդ առաջ եղեն[2] մեզ իշխանքն Հայոց, աւետիս տալով մեզ՝ եթէ Գոեմեր կործանեցաւ։ Եւ իբրև եկաք 'ի տեղին, տեսաք զտեղի կռոցն քանդակեալ. և զկուռսն, որ հնգետասան կանգուն էր, ընդ ջրոս բաժանեալ։ Եւ պաշտօնեայք կռոցն զաղաղակ բարձեալ՝ ողբային չարաչար, որ և դևքն 'ի լսելիս մարդկան կոծէին՝ ասելով. Վա՜յ մեզ, զի և ոսկերքք մարդկան մեռելոց հալածեն զմեզ յերկրէս։ Եւ մարդկոցն տեսլեամբ որպէս թևաւորք ելեալ գնացին յԱՀՏիշատի կուռսն։ Իսկ այլք 'ի դիւացն իբրև զսիրակս անհուն բազմութք, կամ թէ որպէս թանձրամած տաղտարափս՝ այնպէս յարձակեալք 'ի վերայ բազմութեն, և զքուրմսն առ հասարակ լլկեալ՝ թողին իբրև զմեռեալս։ Եւ մատուցեալ նոցն Գրիգորի, քժբշկեաց զնոսա. և հրամայեաց կործանել զԳիսանէս, քանզի պղնձի էր՝ երկոտասան կանգուն երկայնութի[3]։ Իբրև մատեան կործանիչքն 'ի ներքոյ նորա, զոր տեսեալ պաշտօնեիցն՝ բազում ողբով 'ի վերայ յարձակեալք, ասէին. Մեռցուք նախ մեք, և ապա մեծն Գիսանէս կործանեսցի։ Իսկ զօրացն 'ի մէջ առեալ զքուրմսն սպանին արս վեց. և ապա կործանեցին զդուրս մահուն։ Իսկ դևքն ձայն բարձեալ, ասէին. Ով՜ պետ և դուք զմեզ աստի հալածէք, բայց որք աստ կամին բնակիլ, և նոցա մի՛ լիցի հանգիստ։ Բայց չէ անհաւատալի. զոր օրինակ ընդ դրունս քաղաքի զօրք բազում մտանեն, նոյնպէս և այս տեղիս դուռն էր դիւաց. զի այնչափ էին դևքն 'ի տեղոջն Գիսանէ, որչափ 'ի սանդարամետս անդնդոց։

Իբրև կործանեցին զօրքն զկուռսն, սկսաւ սուրբն Գրիգոր հիմն արկանել եկեղեցւոյ։ Եւ վասն զի ոչ դոյր նոցա նիւթ պատրաստ, առեալ քարինս անկազմն

1 Յերկուս օրինակս յայն դղրդոց։
2 'Ի մեամ օրինակի ընդառաջին։
3 Յերկուս օրինակս զԳիսանէս, որ էր երեսուն կանգուն երկայնութեամբ, Եւ երկու կանգուն և կէս մի լայնութեամբ, Բեն պղնձի պատրաստեալ։

և անտաշ, և գտեալ կիր 'ի բնակուէս կռոյն, սկիզբն արար եկեղեցոյ 'ի տեղւոյն՝ ուր կուռքն Դեմետրեայ էր լեալ՝ ըստ նորին չափոյ։ Եւ արար անդ աւուրս երկոտասան, և կամէր զնշխարս սրբոյ Կարապետին զամէնն ասա դնել, բայց ոչ էառ հրաման 'ի նմանէ։ Զ.յլ զհասարակն առեալ դնէր 'ի տապան բրտեայ[1], զի հողեղէն է և ոչ ոսկեղէն. վասն այնորիկ ոչ է պարտ ոսկով պատել զմեռեալ մարմին մարդկան։ Եւ եդ զնոյն տապանն 'ի նոյն պղնձի տապանն. և եդ անդ զմի ակն լուսոյ, զոր եբեր 'ի Կեսարիոյ՝ անուն լիգրոն։ Եւ ոչ եթէ յայտնապէս ումեք դնէր, այլ զտեղին 'ի ծածուկ կազմեալ, և 'ի գիշերին առեալ բրիչս էս և Զ.զրիանոս եպիսկոպոս, բրեցաք երկու առնչափս, արկեալ 'ի նեբրոյ խիճս քարանց, և եդաք անդ զնշխարս սրբոյ Կարապետին։ Եւ այս էին զոր եդաք. զաջ թեկն մինչև ցարմուկն, և զձախ ձեռն թիկամբն հանդերձ, և զոսկր բարձուց աջակողմանն, և այլ մանր ոսկերս 'ի մարմնոյն։ Իսկ զ.Թանագինէին զգլուխն և զաջ ձեռն մինչև ցգօտին զնամ հատեալ ընդ մէջ, և զնորայն եդաք 'ի կաւէ տապան։ Զ.որ թէ ստուգիւ կամիք իմանալ, ցՊլսիդոն թարգմանիչ ասորի իսկ հարցէք, և նա ասէ ձեզ։ Զ.անզի Կարապետին առ անկեան դրանն Զ.ըշակունի, թզաւ մի հեռի գտանես զբևեռանշանին 'ի մուրցն, կէս թզաւ բարձր 'ի գետնոյն և յաջմէ եկեղեցւոյն։ Զ.որ գրեալ է սուրբն Գրիգոր 'ի տախտակս պղնձի, և եղեալ 'ի բեմի անդ՝ թէ կէս ոք մի իշխեսցէ մտանել ընդ դուռն եկեղեցւոյդ. զի մի կոխելով զպատուական նշխարսն, անհաշտ խռովութիւն լիցի այ ընդ նոսա՝ որ մտանեն և ակնարկեն ընդ նա իսկ. զոր և Պլսիդոն իսկ ընթերցեալ է զտախտակն։

Իսկ Զ.թանագինէին առ նոյն սեամն հուպ ընդ ձախակողմ անկիւնին[2]. և այնպէս անյայտ կան 'ի պաշտեստի, զոր և թէ գտանել ոք կամի բևեռացն նշանաւոք՝ չիք հնար, թէ և քառասուն կանգուն փորիցեն. զի պատճառ իրացն այս էղև։ Յորժամ պահեցաք

1 Յերկուս օրինակս Բրգնէայ։ Գինէս հուպ առ սեամն ընդ յախս
2 Յերիս օրինակս Իսկ Անթանագինէին։ Խոշիանն։

զնշխարս սրբոյն, երիցս անգամ ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեւք հանդերձ, և յարուցեալ տա-ւրածեաց զձեռս իւր ընդ արևելս, և ասէ.

Աստուած աստուծոց և Տէր տերանց, որ կատարեաս զկամս երկիւղածաց քոց, և ոչ անտես առնես զաղաչանս այնոցիկ՝ որ խնդրեն 'ի քէն. դու Տէր, որ պահեցեր զսա և ածեր մինչև 'ի տեղիս յայս, ձգեա՛ զաջ քո 'ի վերայ տապանաց սոցա, և կնքեա անվթար զարութիւն քով զոսկերս սոցա, զի մի՛ ոք կարասցէ հանել զսոսա աստի և գտանել մինչև յօր կատարածի աշխարհի և նորոգման սոցա և Տամ սրբոց։ Թէպէտ և 'ի սրբոց ոք չանայցէ հանել, աղաչեմ մի՛ լուիցես նոցա աղօթիցն. այլ ոքք յուսով և հաւատով խնդրեսցեն զբժշկութիւն 'ի դուռն սրբոյ Կարապետիս, բժշկեսցես զնոսա։ Այլ միայն թէ կամք քո իցեն թողուլ զնոսա 'ի ցաւս իւրեանց, զի տանջեալ մարմնով՝ ապրեսցին հոգւով 'ի հանդերձեալ դատաստանին։ Իսկ զդասս պաշտօնէից սորա պահեա, որ զգուշութիւն ծառայեն քեզ և սրբութիւն 'ի Տէր եկեղեցւոջս. զի դու միայն ես կարող յամենայնի, և քեզ փառք յաւիտեանս։

Այս մեր ասացեալ զամէնն, եկն ձայն յերկնից որ ասէր. Աղեցի քեզ որպէս և կամիս, մի՛ ոք գոցէ ըզդոսա հանելոյ պատճառաւ[1]. և ոքք ծառայեն ինձ՝ սբ և անկեղծաւոր վարուք 'ի տեղւոջդ, մանաւանակից լիցին դոցին բարեացն։ Այս շարժեալ ծածկեցաւ տեղին։ Իսկ 'ի վաղիւն ածեալ առաջի Ալիւնեաց իշխանին քուրմն մի, աղաչէին՝ զծածկեալ տեղիս գանձուցն ցուցանել և զդրունս գետնափոր տանն. և ոչ ասաց, այլ մեռաւ 'ի նոյն կախաղանին։ Այս ոչ եղև հնար գտանել. Թէպէտ և կարծէին ընդ հիմամբքն եկեղեցւոյն լինել, ուր Գեմետրեայ տաճարն էր։ Զանգի հիմն եկեղեցւոյն եղաւ 'ի նոյն տեղիս, նոյն չափովն լայնութիւնն և երկայնութիւնն. բայց միայն զի նոքա յարևմուտս երկրպագէին։ Նոյնպէս քննէին և զտաճարն Գիսանէին 'ի վեր բերել, որ էր առ

1 Ցերիս օրինակս Ա մի ոչ գիտասցէ զդոսա ըստ հանելոյ խոշման։

յորդ աղբերն յարևելից կուսէ, որպէս երկուս քայլս մարդոյ հեռի գոլով, և ոչ գտին։

Իբրև լցան նոցա անդ աւուրքն ինն, երթեալ իշխանն Սիւնեաց յաւանն Կուառս, հաւանեցոյց զզօրս գեղջն՝ գալ 'ի մկրտութիւն. որք յանձն առին և եկին ընդ նմա։ Եւ առեալ սրբոյն Գրիգորի ի ջուցանէ ըստ նոսա 'ի ձորն Հ.յծսանայ՝ և մկրտեաց զնոսա. որ էր յարևելից կուսէ հանդէպ Կաճկոնից՝ Հ.ատղանից բերդին։ Եւ մկրտեաց զնոսա քրիստոսազարդ օծմամբն, առնելով հաւատացեալս՝ որ երրորդուն։ Եւ երևեցոյց՝ որ լոյս մեծ 'ի սեան հրեղինի 'ի վերայ մկրտելոյն. և կացեալ երիս ժամս լոյսն 'ի վերայ սիրալի քահանայագործութեանն, և անդէն ծածկեցաւ 'ի տեսողացն։ Եւ որք մկրտեցանն էին, արք և մանկտի, ոգիք հինգ հազար և յիսուն։ Եւ առեալ ածէ զնոսա 'ի տերունական տաճարն, և տան սրբոյ Կարապետին տայր կատարել որ օր մի էր նաւատարդի։ Եւ տուեալ զնոսա 'ի ձեռս քահանայիցն, ետ տանել 'ի գեղջն իւրեանց։ Եւ հրամայեաց քահանայիցն նշան փայտեայ կանգնել ուր զնշխարսն եգիտ, և 'ի մէջ գեղջն. և զկանայսն անդ մկրտել։ Իբրև եղև այս ամ՝, ժողովեալ տայր՝ որն Գրիգոր զմանկունս քրմացն և զպաշտօնեայս կռոցն, և աղաչէր զնոսա՝ դառնալ առ՝ որ՝ ածէ։ Իսկ նոքա ոչ առնուին յանձն, այլ ասէին ցիշխանն. Օ այս բանս 'ի միտ առէք, որ թէ ապրիմք՝ փոխարէնս առնեմք ձեզ. և թէ մեռանիմք, աստուածքն հատուցանեն զվրէժս մեր։ Եւ լուեալ զայս իշխանն Հ.նգեղ տանն, ետ տանել զնոսա՝ 'ի Փայտակարան քաղաքն 'ի տուն բանդի արս չորեքհարիւր երեսուն և ութ՝ գերծեալ զդէս նոցա։

Հ.ԱԼ և յոյժ զարմանալի էր տեսիլ նոցա, քանզի սեք էին և գիսաւորք և զաղրատեսակք, զի ցեղով 'ի հնդկաց էին։ Վասնզի և կռոցն, որ յայս տեղոջ էին, պատճառն այս է։ Պետրոս և Պիսանէ իշխանք էին հնդկաց, և եղբարք ցեղովք. դաւ իմն խորհեալ նոցա Պինասքեայ արքային իւրեանց, զոր իրազեկ է

1 Յօրինակի մուտ 'ի յոլն Եմանուա. զոր և այլ օրինակ 'ի լուսանցսն յաւելու։

ղեալ արքային՝ առաքէ զօր զՀետ նոցա, կամ սպա-
նանել, կամ յերկրէն հալածական առնել։ Իսկ նո-
ցա լեալ մաղապուր՝ անկան առ Թագաւորն Ա ա-
ղաղաչակ. և նա ետ նոցա զերկիրն Ցարօնայ իշխա-
նութիւն. զոր ինքեանք շինեցին քաղաք, և կոչեցին
Ա իշապ։ Ապք եկեալ Յ.շտիշատ, և կանգնեցին ըղ-
կուռան զայնոսիկ յանուն կռոցն զոր՝ի հնդիկսն պաշ-
տէին։ Եւ յետ հնգետասան ամի սպան Թագաւորն
զերկոսին եղբարսն, ոչ գիտեմ թէ վասն ի՞նչ, և ետ
զիշխանութիւն երից որդւոց նոցա Կուառայ և Ա՝եղտեայ
և Հոռէնայ։ Իսկ Կուառ շինեաց զաւանն Կուառս,
և վասն անուան նորա կոչեցաւ Կուառս։ Իսկ Ա՝եղ-
տէս շինեաց՝ի դաշտի անդ իւր աւան, և կոչեաց զա-
նուն նորա Ա՝եղտի։ Իսկ Հոռէանն շինեաց իւր ա-
ւան՝ի գաւառն Պալունեաց, և կոչեաց զանուն նո-
րա Հոռէանս։

Եւ յետ ժամանակաց խորհուրդ՝ի մէջ առեալ
Կուառ և Ա՝եղտէս և Հոռէանն, եղեալք՝ի լեառն
Արքեայ, և գտին զայն տեղին բարեհամ և գեղե-
ցիկ. զի ընդարձակութիւն էր որսոց և հովասուն,
խոտոյ և փայտի առատաձեռն. և շինեցին անդ դաս-
տակերտս։ Եւ կանգնեցին երկուս կուռս, զմինն յա-
նուն Գիսանեայ, և զմինն յանուն Գեմերեայ։ Եւ
ետուն նոցա՝ի սպասաւորութիւն զազգս իւրեանց։
Գիսանէս զի գիսաւոր էր, և վասն այնորիկ նորա
պաշտօնեայքն գէաք էին Թողեալ. զոր հրամայեաց
իշխանն կտրել։ Օ՝ի ազգն այն յորժամ՝ի Աշ դար-
ձան, չէին կատարեալ՝ի հաւատն, և զՀայրենի օ-
րէնսն չիշխէին յայտնի ունել, այլ խաբէութիւն զայս
հնարեցան. ծամ միայն Թողուլ՝ի գլուխ մանկանցն,
զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զպաշտօն պղծութիւն իւ-
րեանց։ Օ՝ որ և ես աղաչեմ զձեզ, զգոյշ կացէք՝ զի
մի՛ այս և՝ի ձերում երկիրդ սերմանեսցի, և մի՛ լի-
նիջիք ընդ անիծիւք։ Այլ մեք յառաջինն դարձցուք
՝ի կարգս և՝ի բանս։

Իբրև հիմնարկեաց՝զն Գրիգոր զեկեղեցին, և եդ
անդ զնշխարսն, և կանգնեաց անդ փայտեայ նշան
տէրունական խաչին՝ի դուռն եկեղեցոյն և՝ի տեղի
կռոցն Գիսանեայ, և եթող անդ պաշտօնեայս և-

կեղեցոյն զՄնատոն և զՍրբոնիդէս։ Եւ զԱպիփան հայր հաստատեաց վանաց ընդ ձեռամբ իւրով. և ե-թող 'ի տեղոջն արս կրօնաւորս քառասուն և երեք, և երկոտասան դաստակերտս ետ նմա, զի տեղեացն ծառայեսցեն։ Յորոց մինն Կուառս, և Մեղտի և Ռրեխ և Մուշ և Խորնի և Կեղք և Ռուզու։ Զանազի աւանք են սոքա մեծամեծք, որպէս կայ 'ի գրի իշխանացն մամիկոնեանից։ Զանազի Կուառս ունէր երդահամարս երեք հազար և երկոտասան, և հեծեալս հազար և հինգ հարեւր։ Եւ Ցում[1] ծուխս ինն հարեւր, և հեծեալս չորեք հարեւր։ Եւ Խորնի ունի ծուխս[2] հազար ինն հարեւր և վեց. հեծեալս եւթնհարեւր[3], և հետևակս հազար և եւթն։ Իսկ Ռրեխ[4] ծուխս հազար վեցհարեւր և ութսուն. հեծեալս հազար և երեսուն, և հետևակս չորեք հարեւր[5]։ Իսկ Կեռեղք[6] երդս հազար և վեցհարիւր, և հեծեալս ութհարիւր, և հետևակս վեցհարիւր։ Իսկ Ռուզու[7], որ թարգմանի բազմաց կայեան, ծուխս երեքհազար և երկուհարիւր, և հեծեալս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս ութհարեւր և քառասուն[8], և տիգաւորս վեցհարեւր և ութսուն. և պարսաւորս երկերեւր և ութսուն։ Եւ ընդարձակեալ ունէին սոքա իւրեանց խաշանց արօտականս զգաւառն Հաշտենից։ Բ.ընդ այս աւանագեղք 'ի բնէ տուեալ էին կռոցն 'ի ծառայութիւն, զոր և իշխանքն դարձեալ հաստատեցին 'ի սէր եկեղեցոյն յամն երեսուն և երկու թուով[9]։ Զ.այս այսպէս կարգեալ է սրբոյն Գրիգորի։

Բ.ընդ յետ երկոտասան աւուր երթեալ իջանէաք 'ի քաղաքագեղն Մեղտի և անդ երեկօթս արարեալ,

1 Յերկուս օրինակս Ցում. յայլսում օրինակի Խրգում։

2 Յերկուս օրինակս Եւ Խրգնի երդս հազար ևն. յայլսում խոհրնի։

3 Յերիս օրինակս հազար եւնն հարեւր. յայլսում հազար ութ։

4 Յերկուս օրինակս Պարեխ երդս։

5 Յերիս օրինակս հեծեալս ութ հարեւր, և հետևակս վեցհարիւր։

6 'Ի միում օրինակի Կեռեղք. յայլ երիսն չէք։

7 Յերկուս օրինակս Բաղում։

8 Յերիս օրինակս հեծեալս երեսուս հազար և քառասուն, և հետևակս աղեղնաւորս եւնհարիւր և քառասուն։

9 Յերիս օրինակս 'ի վերայ եկեղեցոյն յամս և Ի Ռուզ. յայլսում օրինակի յամս . և 'ի միում այլ յամս երեսուն և ութ։

և 'ի մէջ գիշերին եկն այր մի, և գոյժ էարկ՝ եթէ արք հիւսիսոյ գան 'ի վերայ մեր։ Իսկ մեք դէմ ե-դեալ կամէաք անցանել յայնկոյս գետոյն յամրոց մի կոչեցեալ Թարձենք[1]։ Այլ իշխանքն անցեալ գնա-ցին մինչև 'ի դուռն Ուշքաղաքին, և տեղեկացեալ զի ոչ ինչ գոյր, և ապա դարձան և եկին ընդ առաջ մեր. և դարձուցեալ զմեզ յեղերացն Բրածանու, ոմանք անցեալ մտին 'ի քաղաքն յառաջագոյն, իսկ ոմանք ընդ մեզ երթային։ Իբրև հեռացաք 'ի գե-տոյն իբր ձիոյ արշաւանաք երկու կամ երեք, և իբ-րև մերձեցաք առ փոքր ձորակին, և կամէաք անցա-նել միաբան և գնալ 'ի տեղի մեհենիցն, քանզի անդ իսկ էր խորհեալ գնել զմնացեալ նշխարսն, ապա ջո-ւրիք կառացն յայն կոյս ձորոյն ոչ կարացին անցանել, և նստան։ Ապա հրեշտակն յայտնեալ՝ արգել զՍրի-գորիոս, և ասէ. Հաձեցաւ ՀՈՐ սրբոյդ բնակիլ 'ի տեղոջս յայս, և այն՝ վասն ցուցանելոյ 'ի հեռագոյն տեղեաց անդի զզօրուին ՀՈՅ, զոր տեսեալ մարդկան՝ հաւատասցեն սքանչելեացն։ Զան զայս այլ պատ-ճառս 'ի սրբոյն Գրիգորէ ոչ լուաք։

Այլ անդ ձեռն 'ի գործ արկեալ շինուածոյ եկե-ղեցոյն, և նոյն օրինակաւ[1] 'ի գիշերի կազմեցաք զտե-ղի նշխարացն. և եդաք 'ի քարեայ տապան առնա-չափ[2] զերկուց վկայիցն մերձ առ դուռն եկեղեցւոյն յաջակողմանն։ Այլ զմիւս և զակնն լուսաւոր դներ 'ի նոյն տապանին, յաղագս միշտ լուսոյն զոր ունէր։ Բայց զորս եդն, այս են. զԱթանագինէին զհա-սարակն, և զԱրատեանն զոսկերս բարձուցն ձախոյ, և զերկու սրունսն, և զմնան ինչ ոսկերաց ողնին։ Իսկ զայլն 'ի Կեսարիա առին իւրեանց մասն, զերկուս ոտսն և զահեակ բոյթն։ Զրդ իբրև եդաք 'ի ներս 'ի տապանն զնշխարսն նոյնչափ խորուքն որպէս յինն-նեան տեղին, և ծունր կրկնեալ սրբոյն Գրիգորի մեք հանդերձ, զնոյն աղօթս մատուցաներ առ ՀԱՅ, զի մի ոք յանդգնեսցի առ 'ի հանել զնոսա։ Այլ նոյնպէս եկն ձայն յերկնից, եթէ զոր ինչ խնդրեցեր՝ եղիցի,

1 Յօրինակի միում Հովէանի։
2 Յերկուս օրինակս 'ի Փարեզին գտանի առանցին։

և ոչ ոք կարէ գտանել զդոսա։ Եւ զայս ասացեալ խաղաղացաւ տեղին 'ի մէջ. և յայտնի է նշանաւ բևեռով փափագողացն իրքն։

Երդ որ զկնի այսոցիկ է՝ զայն Թողաք այլոց պատմագրի, մինչև դարձեալ կրկին դառնայ պատմուիս 'ի Տարօն. զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ, նոյնպէս և զիմն չիշխէ ոք գրել[1]. զի Թագաւորաց ժամանակագիրք են։

Այս պատճէն առաջին պատերազմին Երճանին, և որ ինչ գործեցաւ յաւուրս իմ։

1 Յերկուս օրինակս ևի «որպէս» զայլ տեղեաց չեմ ինչ գրեալ 'ի Բ. Բ. Ի. նոյնպէս և այլն ևի» չիշխէ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎԱՍՆ ԳԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ՑԱՐՁԱՆՆ ԵՂԵՒ

Ի ԺԱՄԱՆԱԿՍՆ յայնոսիկ լուր եհաս 'ի դուռն արքայի՝ թէ Կոստանդիանոս կայսրն հաւատաց 'ի Քրիստոս, և դադարեցոյց զհալածումն եկեղեցեաց, քաջութիւն կալեալ զթագաւորութիւնն։ Այսպէս խորհուրդ 'ի մէջ առեալ՝ գնալ 'ի դուռն կայսեր վասն դնելոյ դաշինս խաղաղութեան 'ի միջի իւրեանց, եկին հասին 'ի գաւառն Այսպահունեաց 'ի քաղաքս զեղն Անծկերտ[1]։ Արքայն հիւսիսոյ զօրս գումարեալ, եկն 'ի վերայ իշխանին Ալբայ. և զնա փախուցանէր արարեալ, բերին մինչև 'ի Կարնոյ քաղաք։ Այս զերկիրն գերի վարեալ, տարան ոգիս իբրև քառասուն և ութ հազար։ Իբրև եկն պատգամաւորն Ալբայ իշխանին առ թագաւորն Տրդատ, և խնդրեալ իւր զօր յօգնականութիւն՝ զի մի տացէ զերկիրն տանել, և թագաւորն Տրդատ տուեալ երեսուն հազար ասանց 'ի ձեռն իշխանին Այսպահունեաց, և արձակեաց յօգնականութի Ալբայ իշխանին։ Որք երթեալ ամսօրեայ ժամանակս յամեցին. և սակաւ մի գերութի դարձուցին. և երեք իշխան ըմբռնեցին և ածին։ Այս կողմնապահ թողեալ երկրին, և ինքեանք դարձան առ թագաւորն։

Իսկ իմ աղաչեալ զնոսն Գրիգոր գնալ 'ի վանսն իմ, զոր ինքն հիմնարկեաց յանուն Սրբ Կարապետին. զի կայր լոկ միայն հիմնարկեալ։ Օ որ թագաւորն իսկ յանձին կալեալ գալ 'ի տեսուչ տեղեացն՝ զոր հիմնարկեաց, և եղեալ Աշտից[2] տեղեացն թագաւորն ընդ լեռնակողմն գնայր։ Վանդն ոմանք տեսեալ զզօրսն Յունաց, համբաւեցին՝ թէ իշխանքն հիւսիսոյ թա-

1 Ցերկուս օրինակս Մանազ-կերտ։

2 Ցերկուս օրինակս 'ի Դաշտիս տեղեացն։

դաւորին ծանր զօրաք գան 'ի վերայ. քանզի Տրդատ բազում գաւառս և քաղաքս էր զնոցա քանդեալ, և վաթսուն հազար արս 'ի գերութիւն իջուցեալ 'ի Ռուին։ Իբրև տեղեկացաւ՝ թէ Յունաց զօրքն էին, դարձաւ 'ի գաւառն Հաշտենից. և էին բանակեցաւ 'ի գլուխս Արձանին վասն ընդարձակութեան վայրուցն։

Իբրև եկաք 'ի տեղին Ինանակնեան թագաւորաւն հանդերձ, ինդիր արարաք Նոտոնի և Կրօնիդեայ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է, սակաւ ինչ պակաս, մեք զնոսա չեմք տեսեալ։ Յետ տրտմեցաւ յոյժ թագաւորն, զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա։ Իսկ 'ՏԷՐ Ռրիգոր առաքեաց խնդրակս զԱղբիանոս եպիսկոպոս հանդերձ երկու սարկաւագաք, պատուէր տուեալ նմա՝ եթէ ընդ առաւօտն ելանեն յանտառէն 'ի բլուրս ուրեք, և դու անդ կաց զդոյշ, զի մի զքեզ տեսցեն և փախիցեն։ Յետ զաւուրս չորս ոչ կաբացին գտանել. իսկ 'ի լուսանալ հինգերորդին առաւօտուն՝ լուան զձայն սաղմոսերգութեան նոցա, զի գային յանտառէն յարևմտից կուսէ 'ի քաղցրահամ աղբերէն։ Յետ եկեալ 'ի բլուրն արևելեան 'ի տեղիս արարոցն Ռեմետրեայ, զոր կոչեմք Արևու բլուր[1]. զի և անդ իսկ էին դարափոսք խուցք[2] նոցա, 'ի կողմանէ արևելից. և իբրև մերձեցան 'ի վերայ աղբերն, սկսան սաղմոսել այսպէս. "Լսելի արա ինձ, Տէր, առաւօտու զողորմութիւնքդ,,։ Իսկ Աղբիանոս ասէ. "Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ,,։ Յետ աղօթեալ անդ, ասէ Նոտոն ցԱղբիանոս. Բարի եկիր Հանապարհորդ խաղաղութեամբ։ Յետ նա ասէ. Բարուք գտաք զձեզ օթեվանք սրբոյ Հոգւոյն, և Հրաշք լուսոյ։ Այլ և աւետիք ձեզ, զի Ռրիգոր և Տրդատ թագաւորն 'ի բնակութիւնս ձեր էն եկեալ, և յոյժ խնդրեն զձեզ։ Իսկ նոքա ասեն. Յետ ձեզ աւետիք, զի սատանայ կործանեցաւ, և Տէր այսօր կրկին ուրախութիւն լցոյց զարարածս իջմամբ Տէր Հոգւոյն։ Յետ կոչեցաւ տեղին այն Արևուտեաց բլուր։ Յետ առաքեաց Աղբիանոս առ մեզ զերկուս սարկաւագսն աւետաս-

1 Յերկուս օրինակս Ռեմետրեայ բլուր։

2 Յերիս օրինակս դարափոր խուցք նոցա։

ւորս. զոր լուեալ մեր, յոյժ ուրախ եղաք։ Եւ դարձեալ զնոյն սարկաւագունսն առաքեաց ՝ի Գրիգոր աւետաւորս առ Տրդատ՝ի ստորոտս Բ.ձանին. որ յոյժ ինդութեամբ լցեալ, եկն՝ի վանսն հանդերձ գլխաւոր իշխանօքն։ Իսկ՝ի տեղին, ուր զաւետիսն ետուն, հրամայեաց վեմն ժողովել բլրաձևս, և կանգնեաց անդ նշան խաչի. զոր և կոչեմք Բ.ւետեաց խաչ[1]։

Եւ առեալ սրբոյն Գրիգորի զդասս պաշտօնէիցն, և զնշան տերունական խաչին, հանդերձ ջահիւք և անուշահոտութեամբ ինկոց և պաշտամամբք. որ և ձայն ուրախութեան պաշտօնէիցն զանտառն հնչեցուցանէր։ Եւ մերձեալ՝ի բլուրն, ընդ առաջ եղեն մեզ. և միաբան՝ի բլուրն եղեալ աղօթեցաք։ Եւ յետ ողջունին, ասէ սուրբն Գրիգոր. Խարիոք գտաք զձեզ առաւօտք խաղաղութեան։ Իսկ նոքա ասեն. Խարի եկիր արուսեակդ արդարութեան, որ զտիեզերս լուսաւորես. մշակ առանց ամօթոյ, և աշտարակ բարձրագոյն քան զերկինս։ Եւ բազում անգամ համբուրեալ զմիմեանս, և առեալ զնոսա՝ գայաք յեկեղեցին. զի ոչ էր բլուրն հեռի՝ի տեղոյն, այլ սակաւ մի՝ի բացեայ՝ի հիւսիսոյ կողմանէն, և ինքն հայի ընդ արևելս, բարեհամ և դիտանոց երևակ բազում վայրուց։ Իբրև ածաք զնոսա առ Թագաւորն, և նա արտասուեալ՝ աղօթէր օրհնիլ՝ի նոցանէ. և յարուցեալ համբուրեաց զնոսա, և նստան առաջի վկայարանին։ Եւ բազում վարդապետութիւն խօսէին ընդ նոսա, և ուսուցանէին զարբութիւն կրօնս։ Եւ կացեալ անդ աւուրս հնգետասան, Թագաւորն՝ի նոյն տեղին կանգնէր զտերունական նշան մեծանդամ քարակոփ, ՝ի տեղի տաճարին՝ ուր Գիսանէսն էր, առաջի աղբերն՝ ուր զբժշկութիւն հիւանդացն կատարէր։ Եւ յորժամ կանգնեաց զսոր խաչն, տօն ուրախութեան կատարեցին. և ամ բազմութիւն ժողովրդոյն, որք կուտեցան՝ի տեղեաց տեղեաց, եղեն թուով արք հարեւր հազար չորեքարեւր և յիսուն։ Լոող զզօրս Թագաւորին և զպաշտօնեայս սրբոյն Գրիգորի. քանզի Թագաւորն հրամայեաց Թուել, և զթիւն՝ի բուն խա-

1 Յերիս օրինակս ասէին խաչ։

չին եւ գրել, զի լցի վկայ ազգաց անցելոց յետ ժամանակաց։

Եւ իբրև կատարեցին զպաշտօն աւուրցն, եկին հասին զօրքն՝ որ 'ի Ալիրս էին՝ առ Թագաւորն, և ածին ընդ ինքեանս երիս իշխանս և չորեքհարեւր այր ընդիր։ Որ տեսեալ Թագաւորն, ուրախ եղև յոյժ, և գոհացաւ զնոսա՝ որ եւ 'ի ձեռս իւր զթշնամին իւր. և առեալ զնոսա արձակեաց կապեալս յամուրն Ողկան։ Եւ ինքեանք յառաջեալ գնացին, բազում աւուրց օթևանօք զանց առնէին, մինչև հասին 'ի Հռոմ քաղաք. և անդ կացեալ սակաւ աւուրս, դարձան մեծաշուք պատուով։ Եւ բազում ուրախութիւն գային հասանէին յԱկեղեաց գաւառն, 'ի Թուին աւան. և յետ երից աւուրց եղեալ անտի, գային հասանէին ընդ գաւառն Պալունեաց. և երկուս աւուրս մնացին 'ի մեծ աւանն Հոռեանս։ Եւ անտի եղին եկին 'ի գեւղն Կուառս. և քանզի աշխատեալք էին, հանգիստ առնէին այն օր։

Լրդ յորժամ գնացին զօրքն 'ի Ալիրն, և դարձուցին զգերիսն, և զերիս իշխանն Եդին յՈղկան զորս ածին ընդ իւրեանս կապեալս, և ինքեանք թողեալ կողմնապահ զիշխանն Ղձնեաց չորեք հազար արամբ՝։ Նոսկ նորա կաշառեալ 'ի Թագաւորէն հիւսիսոյ, առեալ 'ի նմանէ վաթսուն հազար դահեկան, և գնաց ինքն յերկիրն Պարսկանեաց. զի ամ ջան նեղութեն վասն Թագաւորին ունելոյ էր։ Որ ոչ իմացաւ Տրդատ վասն թշնամանացն. և նա զորս փաքստականս ըմբռնէր, կապել տայր և 'ի բանակն արկանել։ Եւ այնչափ հմտութիւն եկեալ և դիտակաց, որ և զթագաւորն 'ի նեղուց տեղ թակարդեալ։

Բայց առ Թագաւորն Տրդատ զօրք որ կային՝ երեսուն հազար միայն էին. և այլն ամենայն երթեալ էին 'ի Մուշն աւան։ Լրդ 'ի հասարակել գիշերոյն, մինչ մեք զպաշտօնն մատուցանէաք առաջի նոր խաչին, զոր և կանգնեաց հրամանաւ սրբոյն Գրիգորի իշխանն Սիւնեաց. զի մինչ Տրդատ զիննակնեանն

1 Յերիս օրինակս գիշխանն Ղձ. պակաս սպրդեալ 'ի համառօտ նեայ Դաւիթ ասան. որ երևի վերագրութիւն չորեք հազարին գրոյ։

խաչն կանգնեաց, իշխանն Լնգեղ տան զՀոռենիցն կանգնեաց, և Սիւնեացն զԿուառացն. և նոքա Գրիգորոր երթեալ զիաչն օրհնել, և յերկու աւանսն հիմն եկեղեցւոյ արկանէր։ Բրդ 'ի նոցն աւանսն 'ի գիշերին պաշտմանն, մինչ դեռ զօրհնութիւն երից մանկանցն կատարէաք և թագաւորն առ մեզ էր ամ իշխանաքն 'ի յաղօթել, և չունէաք բնաւ իրացն կասկած, յանկարծակի ձայն ահեղ իբրև ամպոց՝ որ յոյժ դղրդէ՝ եկն եհաս 'ի վերայ մեր։ Օ յ զսարին կողմ գեղջն պաշարեցին հետեւակքն, և զնեբքինն հեծեալքն։ Լու սկսան հնչեցուցանել զփողս պատերազմաց, և թնդիւն սաստիկ շուրջանակի, և զձիոց վրնջիւնսն էր լսել։

Լու սկսան իշխանքն մեր ելանել ընդդէմ նոցա 'ի պատերազմ. քանզի միջօրեայ էր լուսինն։ Բայց 'ի պատերազմէն արդեալ զնոսա Տրդատ. Բյա, ասէ, գիշեր է. և մեք ոչ գիտեմք զչափ զօրուն, թէ որչափ է համար զօրուդ. այլ թէ իմաստութիւ կամիք առնել, ելէք վեց հազար այր 'ի մէջ այգեստանեացդ 'ի գլուխ Բրձանին թագիք մինչև ցառաւօտն, և չորեքհազար 'ի Հաշտենից կողմանդ, և չորեքհազար ընդ մէջ նոցա անցեալ գնասցէն առ այգեստանեաքն 'ի վերին գահն, և մեզ ուշ կալցէն։ Բայց տեսէք զի մի զձեզ տեսցէն, և նենգուիք 'ի փախուստ դարձցին, և 'ի մէջ առեալ՝ վտանգեսջիք։ Լու բաժանեալ արձակեաց զնոսա ուր և խորհեցաւ։

Բայց թագաւորն և Գրիգոր մեւք հանդերձ 'ի փոքր ամրոցին կայաք և աղօթէաք։ Լու մի ոմն 'ի զօրացն Սիւնեաց պատանի մի ըմբռնեաց 'ի հիւսիսականացն, և էած առ թագաւորն։ Լու իբրև տեղեկացաւ եթէ 'ի քո զօրացդ և իշխանացդ է իրդ, և այս է թագաւորն հիւսիսի Գեղուեհոն, և վասն ուներլոյ զքեզ եկեալ է յիսուն և ութ հազարաւ, և հրամայեաց զօրացն պատրաստել զյետին աւուրն մահու պատերազմ։ Լու իբրև առաւօտ եղև, զօրքն սկսան կազմել փողոցս թագաւորին՝ զի յԲրձանն ելցէ։ Իսկ թագաւորն հիւսիսոյ հրամայեաց զօրացն զառաջս ունել. վեց հազար սպառազինաք արգելուլ կամէր զթագաւորն Տրդատ։ Որոց եկեալ յառաջն,

արդելուին զնա 'ի գլուխ Լ.րձանին. և զբազումս ժամն ոչ կարացին ելանել 'ի վեր։ Օ.որ տեսեալ սրբ. բոյն Գրիգորի, յարտասուս եղեալ, և ձայն բարձեալ՝ ասէ. Մ՝կրտիչ և Կարապետ Քրիստի, տես զինչ գործեն. և հասիր յօգնուն, և արա զայս օրս նշանաւոր յազգս։ Լ.ս առեալ զնշխարս առաքելոցն՝ զոր բերեալ էր 'ի Հռոմայեցւոցն, տեառնագրեաց 'ի վերայ Թշնամեացն։ Լ.ս առժամայն ոյժ տուեալ Տրդատայ, քաջառնաբար ձայն բարձեալ՝ յօգնականուն կոչելով զսբ Կարապետն, և կորեաց զառազմ առաջագահիցն [1], և ել 'ի վերայ բլերն։ Լ.ս որք 'ի գիշերին թագուցեալ էին, յարուցեալ 'ի մէջ առին զայն զօրն, և փախստական արարեալ իջուցին զնոսա ընդ հարաւակողմն յանտառն. և որպէս 'ի Թակարթ արկեալ, սուր 'ի վերայ եդեալ՝ կոտորեցին. և անուանեցաւ տեղին այն Թակարթս։

Իսկ զօրն հիւսիսի որպէս դիպող ժամանակ գտեալ, յարձակեցան 'ի վերայ գեղջն. և դեռ հանեին զմեզ յամրոցէն։ Օ.որս [2] տեսեալ չորեքհազար արանցն, որ 'ի վերայ գեղջն կային, յարձակեալ 'ի վերայ՝ փախստական արարին զնոսա 'ի նեղքոյ գեղջն։ Օ.որ և ոմանք յայգորդացն զլաջարդ առնէին զՃակատ երիվարացն, և ոմանք 'ի հեծելոցն 'ի վիմաց անտի մեռան։

Իսկ զօրք մեր ցրուեալ զնոսա ընդ այգեմէջն, սաստկաւք փրծան. և անկան 'ի տեղոջն յայնմիկ վեցհարեւր այր 'ի Թակարթն. իսկ երկու հազար եւթն հարեւր այր, և զորս պարսեւոքն [3] կոտորեցին, ութ հարեւր վեց. և ընդ ամենայն՝ չորեքհազար երկու հարեւր և երկոտասան այր։

Լ.ս ապա դարձեալ թագաւորն 'ի փոքր կոտորածէն, ել 'ի գլուխ Լ.ռձանին. և հարեալ զազդարար փողն, մինչև ՀԱՄ զօրքն ժողովեցան 'ի մի վայր։ Լ.ս իբրև եկին հասին 'ի տեղին, և զբն Գրիգոր իջուցին յանդառն, և պահէին զնա արք վեցհարեւր։ Իսկ թագաւորն հիւսիսոյ առեալ զզօրն իւր, գնաց 'ի Հաշտենիից տափարակն. և առաքեաց թուղթ առ

1 Ցերկս օրինակս առաջապահին։

2 Ցերկուս օրինակս որ փնեալ։

3 Ցերկուս օրինակս պարսաւորք։

Տրդատ՝ թէ եկ 'ի վաղիւն տացուք պատերազմ, և և եղիցի օր յաւիտենական 'ի մէջ երկոցունցս. կամ տացես զիշխանսն իմ յիս, և հարկս հնգետասան տարւոյ. ապա թէ ոչ, քանդեմ զերկիրդ քո սրով և գերութիւն և մահուամբ, որպէս զի ծանիցես զդէմս խոզուութեան քո՝ որ եղեր առաջի զօրաց քոց. արդ ըստ այդմ արա զպատասխանիսդ։ Այս ընթերցեալ ըզթուղթն, ոչ արար նմա պատասխանի. այլ յարուցեալ գնաց երեսուն հազար արամբք 'ի պատերազմ, և երթեալ յանդիման նոցա իջաւանեցաւ 'ի Մուշեղամարգն Հաշտենից։ Այս 'ի վաղիւն սկսան ռազմ գործել և Ճակատ յօրինել. և փողոցս թողեալ պատերազմին գրունս երկու, և դռնապահս տեղեացն զբաղբատունեացն իշխանն կացուցանէր։ Իսկ զաջ թևն զօրուն տայր 'ի ձեռն իշխանին Սիւնեաց, և զահեակ թևն 'ի ձեռն իշխանին Ալուանից տան։ Իսկ ըզգահերեց իշխանսն կացոյց թիկնապահս իւր. և այն պէս յօրինեցան երկոքին Ճակատքն, և պատրաստեցան 'ի խումբն։

Իսկ իբրև ՝ամ զօրքն սկսան ընդդէմ իրերաց անցանել, ձայն բարձեալ արքայն Հիւսիսոյ ասէր. Լաւ քայ Հայոց, ինձ մնասիր։ Այս իբրև եկին ընդդէմ իրերաց, սկսան իբրև զմրճաւորս քարահատաց, կամ իբրև զուռնածս՝[1] որք պատեն զշանթս հրայրեացս, մինն առնոյր և միւսն իջուցանէր։ Վանդի արքայն Հիւսիսոյ մեծահասակ էր և կորովի իբրև զՏրդատ. և բազում կոփեալ միմեանց, ոչ ինչ եղև։ Հայոց սկսաւ պակասիլ արքայն Հիւսիսոյ. և գիտացեալ եթէ վնասելոց եմ, և քանզի Ճօպանաւոր էր՝ ահապարեաց և ձգեաց զՃօպանն, և արգել զաջ թեւն ընդպարանոցն. և փութանակի դարձաւ և կղթեաց զՃօպանն[2], մինչ զի և չկարաց բնաւ շարժել զձեռն Տրդատ։

Այս մտրակեալ զկուշտ երիվարին զկնի Գեղեռնոնին, այնպէս փութացեալ մինչ զի ոչ ետ քայլել նմա առաջի իւր տասն քայլ։ Իբրև եհասանէր, ասէ. Կատաղի շուն, խառանեցեր զկնի քո ջլացդ։ Այս ամ-

1 Յերիս օրինակս Իբրև զսառնաւ առս մինն առնոյր և մինն։

2 Յերիս օրինակս գարձաւ 'ի ետ-ռիել զՃօպանն։

բարձեալ զաջ ձեռն իւր 'ի վերս, ի ջուցանէր զսուսերն 'ի վերայ ձախոյ թիկանն Գեդեոնի. և անցուցեալ ընդ գօտին, և զողն երիվարին հանդերձ գլխովն բաժանեալ՝ յերկիր ձգեաց։ Եւ այն էր զարմանալի, զի գլուխն և աջ ձեռնն և աջ ոտն ընդ միմեանս, և ողն երիվարին ընդ մէջ հերձեալ թաւալեին։ Օ՞ որ իբրև ետես իշխանն Զեբեդ տանն 'ի վերայ ածեալ զահեակ թեւն, և ձայն տուեալ ասէր. Իշխան Միւնեաց, 'ի մէջ ած զգունդ այծուցդ, զի անկաւ Զոնն քոյն։ Իսկ նա ընդ մէջ ածեալ, եհատ զզօրսն. և անցեալ յաջ թեւապետն հիւսիսոյ, ասէ. Ա՞ստեղահաձ[1], ինձ մատիր և մենամարտեսցուք։ Եւ մատեան իրերաց. և ահապարեաց հիւսիսայինն, և կտրեաց զգլուխ երիվարին Միւնեաց իշխանին։ Իսկ նորա ածեալ զսուրն, և եհատ զառաջին ոտն երիվարին հիւսիսայնոյ. և երկոքեան զոյգ 'ի վայր անկան, և բուռն[2] հարեալ զմիմեանց։ Իսկ մի ոմն 'ի ծառայից Միւնեաց իշխանին մղեն տուեալ, ընկէց զոմն 'ի վայր յերիվարէն. մատուցանէր նմա, ասելով. Ա՞ռի, տէր, և հեծիր։ Եւ ահապարեալ նստաւ 'ի վերայ նորա. և դարձեալ՝ կտրեաց զգլուխ նորա, ձգեալ 'ի մախաղն, և դարձաւ։ Եւ իբրև ետես իշխանն Զեբեդ տան զիրսն՝ որ եղև, և զզօրսն զի փախստական գնացին, ապա ձեռն 'ի գործ արկեալ՝ բախեցին զպատերազմունսն ընդ իրեարս[3]. զոր և թագաւորին ըզհետ մտեալ մինչև 'ի մուտս արեգականն, յանիմաստ կոտորեաց որք դիմադարձն գտան։ Եւ իբրև 'ի նուրբ տեղին դիմեալք, օթեվանս խնդրէին առնել առ ելեր գետոյն փոքեր՝ որ անցանէր ընդ գաւառն Զաշտենից, ուր երթայ ընդ արևելս հիւսիսախառն, և բանակեցան նոքա յայնմ կողմանէն, և սոքա յայսմ կողմանէ։ Եւ իբրև այգն զառաւօտն մերկանայր, պատրաստեցան մնացեալ զօրքն հիւսիսականացն, և յարձակեցան 'ի վերայ զօրացն Զայոց, և սկսան

1 Յերկուս օրինակս Ասպեղահալ. յառաջ մաթէր. 'ի միւսմ օրինակի Ասպեղահաջ։ Յերիս օրինակս պակասէր Ն մաթեան իրէրաց. և յերկուս օրինակս փոխանակ այնր պակասէր Ն մենամարտեսցուք։

2 Յերկուս օրինակս բուռն բուռն զմիմեանց հարին։

3 'Ի միւսմ և ԼԵԹ օրինակի առ իրարս։

յանխնայ կոտորել։ Եւ այնչափ յանդգնեալ, մինչ զի զիշխանն Օտոիայ'ի մէջ առեալ բազմաց պատեցան զնովաւ. և 'ի նեղ արկեալ, մինչ զի աղաղակեաց ասելով. Ո՞ւր ես իշխանդ Սիւնեաց, հաս ինձ 'ի թիկունս։ Եւ նորա հասեալ իբրև զարաթռիչ արծիւ, հալածեաց զարմն 'ի նմանէ։ Եւ իբրև ետես եթէ խոցեալ էին չարաչար ընդ երանոյն նորա, առեալ զձեռանէ նորա՝ տարաւ 'ի բանակն, և անդէն մեռաւ։ Բայց զօրապետն հիւսխային, որ էր թագուցեալ զկերպարանս իւր, 'ի գիշերին արծարծեալ ըզմնացեալ իշխանն գնալ'ի վերայ արքային, և արարին որպէս խորհեցանն։ Յանկարծակի աճապարեալ 'ի վերայ խորանացն արքայի, կտրեցին զթևսն 'ի միմեանց. և հասեալ 'ի վերայ արքային, խուն մի և ըմբռնեալ էին զարքայն՝ եթէ ոչ էր գունդ մի խուճապեալ Մեհնունեացն արիք, մինչև էլ արքայ 'ի դրասպակս զօրուն հիւսխայ։ Եւ դիմահարեալ միմեանց արքայն և զօրապետն, մինչ զի կարեվէր խոցեաց զահեակ թեկնն Ցրդատայ արքային. և բարկացեալ մրմռեալ իբրև զառուծ յարձակեցաւ 'ի վերայ նորա, և հարեալ զգլուխ նորա յերկուս ձեղքեաց, և ինքն առաջի եղեալ զզօրսն՝ փախստական արար և տարաւ մինչև 'ի կողմանս Հարքայ. և այլք ոմանք հետամուտ եղեալ գնացին մինչև 'ի Կարնոյ քաղաք։ Որ իբրև դարձաւ թագաւորն և իշխանքն Մ՚ղձանն, և իջին առ տէն Գրիգոր 'ի տեղին՝ ուր էր Կարապետն էր, մեծ գոհութիւն ՝այ և պատարագս ողջակիզաց մատուցանէին սպիտակ զուարակաց և նոխազաց և բազում գառանց. և աղքատաց բազում ողորմութիւս առնէին։ Եւ իբրև եկին ժողովեցան զօրքն ՝ամ և իշխանքն, և համար արարեալ՝ գտաւ սպանեալ 'ի մերոցս հազար և ութսուն. իսկ 'ի նոցանէ հնգետասան հազար էին հարեւր քառասուն և երկու։

Իսկ նոքա՝ որք փախստական գնացին մինչև 'ի Հարք, և անդ իշխանն Հարքայ անկեալ 'ի վերայ 'ի վեց տեղիս, կոտորեաց հազար և վեց այր։ Եւ 'ի Մ՚իրս մնեալ 'ի բազում տեղիս կոտորեցին 'ի նոցանէ։ Եւ որ գնացին 'ի գաւառն Իւրեանց, էին վեց

հազար. բայց մինչ 'ի Տարօն մտին, յիսուն և ութ հազար էին։ Այս ամ գործեցաւ 'ի գալ նոցա 'ի Հռոմայ. բայց եղև 'ի ձեռն նենգաւոր իշխանին Զգնեաց։ Որ իբրև կացին աւուրս երիս 'ի տեղին ինն-նակնեան, և ապա միաբան խաղացին գնացին 'ի գաւառն Պահունեաց, ընդ ինքեանս տանելով զիշխանն՝ որք էին 'ի բերդն Ողկան. և զչորեքարեւր արսն 'ի դիւանն արքունի տայր արկանել։ Այս իբրև հասաք զօրացն, զոր յառաջն էր յուղարկեալ, հրամայեաց նոցա ունել զիշխանն Զգնեաց. և ածեալ առաջի, կամէր ծայրատել զոտս և զձեռս նորա։ Որ արդեալ ոչն Գրիգոր 'ի պատուհասիցն. բայց 'ի պատուոյն մերժեալ հրամայեաց, և վարեալ 'ի գաւառէն Հայոց։

Որ և զկնի այսորիկ՝ եթէ կամի ոք իմանալ, յայլ պատմագրէ ծանիցէ. բայց առ 'ի մէնջ այսոքիկ պատասխանի բաւական լիցի ձեզ։ Բայց դուք եթէ գալ կամիք յերկիրս յայս, բարի է երկիրս, և վայրքս անուշ օդ[1] և բազմաջուր, դաշտաձև, և շուրջ զերամբքս բազում ամրոցք։ Այրկիրս խոտաբեր և մեղրաբուխ. և որպէս մանանայն ինջանէր յերկնից անդ առ Հրեայսն, նոյնպէս և աստ 'ի մերում երկրիս 'ի վերայ անտառացս ինջանէ քաղցր առաւելքան զմեղր՝ որ կոչի գազապէն։ Այս և այդ երկիրդ խորշակահար է և հացապակաս, և անասուն ոչ բազում 'ի դմա. իսկ այս երկիրս ամ բարութիւն լի է և աջողակ և առողջ։ Իշխանքս կրօնաւորասէրք, և 'ի չարեաց ՝ոչ, և աղքատասէրք, և որքոց խնամածուք. վերակացուք եկեղեցեաց, և տեսուչք ամենեցունց։ Արդ աղօթիւք ձեր-ովք պահեսցէ ՝որ զհօտս մեր և զձերդ 'ի խաղաղութիւն շնորհիւ ՝նոյ։

Ողջ լերուք 'ի ՝որ մեր Յ՝ա Վ՝ա։

1 Յերկուս օրինակս ԵՒ անուշ օդս ԵՒ ջուր բազում։

ՅԱՆԿ ԱԼՖԱԲԵՏԱՅ

Ագաթանգեղոս 19. 22:
Ագենայիք 12:
Աթանագինէ 8. 23. 24. 33. 38:
Ակգենոս 24:
Ալբիանոս 33. 41:
Ալեքսանդրայիք 11:
Ալեքսանդրիա 24:
Ալձնիք 43. 49:
Այծան 35:
Այրարատեան գաւառ 21:
Ամակ 20. 21. 23:
Ամատոտաս 14. 15. 16:
Անգեղ տուն 24–28. 35. 44. 46. 47:
Անդրէաս 14:
Անձևայիք 25:
Անտոն 8. 10. 17. 18. 37. 41:
Աշտիշատ 16. 25. 29. 36. 40:
Աշտից տեղիք, փէ՝ Աշտիշատ:
Ապահունիք 40. 43. 49:
Առաջաւորք 23:
Ասկղնէ 22:
Ասորիք 14. 18. 19. 24:
Աստղօնք 28. 35:
Արածանի 38:
Արեւու բլուր 41:
Արծուիք 29:
Արծրունիք 25. 27. 29. 30:
Արման լեառն 27. 28. 31. 39. 40–42. 44. 45. 48:
Արման քուրմ 25. 26. 27. 31:
Արշակունի դուռն 33:
Արշակունիք 19:
Արջուց կամ Արջոյ ձոր 30:
Արտազ 21:
Արտեան 20:
Աւետեաց բլուր 41:
Աքիկոս 14:
Աքիւլաս 16:

Բաղում, փէ՝ Բուղու:
Բասեան 23. 28:
Բարդ 22:
Բարթուղիմէոս 10:
Բեկտոր 14. 15. 17. 22:
Բիւզանդիա 16. 17:
Բուզանդիա, փէ՝ Բիւզանդիա:
Բուզու 37:
Բուրգար 21. 22:
Բրեխ, փէ՝ Պարեխ:

Գամիրք 21. 22:
Գայիոս 14. 17:
Գեղուեհոն 44. 46. 47:
Գիսանէ 8. 15. 16. 25. 27. 31. 32. 34. 36. 42:
Գլակ 15:
Գուրթ 22:
Գրիգոր 14. 16. 18. 19. 21–26. 31–39. 40–49:

Դաւիթ 22:
Դեկիոս 24:
Դեմետր իշխան 35:
Դեմետր կուռք 8. 25. 32. 33. 34. 36. 41:
Դեմետր քուրմ 25. 27. 28. 29. 30:
Դինասքէ 35:
Դիոկղետիանոս 22. 24:
Դկլատիոս 24:
Դուին 24. 41:
Դռոյ 43:

Եգիպտոս 14. 23:
Եկեղեաց գաւառ 13. 23. 43:
Եղիազար 9. 11. 12. 14. 16. 17. 24:
Եման, փէ՝ Այծան:
Եպիփան 10. 17. 37:
Երէզնաւան 23:
Երուսաղէմ 11. 14. 17. 23:
Եւթաղէ 21. 22:
Եփեսոս 23. 24:

Ջինոբ 17. 18. 19:

Թադէոս 10. 21:
Թակարդք 45:
Թարձենք 38:
Թիլն 43:
Թորգան 24:

Իմնակնեան տեղիք 8. 13. 15. 31. 41. 43:

Լիմնիք 22:

Խոհրնի, փէ՝ Խորնի:
Խոսրով ալքայ Հայոց 18. 20. 21. 23:
Խոսրովուհի 22:
Խորնի 37:
Խրանի, փէ՝ Խորնի:
Խրատում, փէ՝ Ցուտ:

Ծոտիք 48.

ԿաՃկոնք 35:
Կապադովկացւոց աշխարհ, փէ՝ Գամիրք:
Կարապետ, փէ՝ Յովհաննէս Կարապետ:
Կարին 25. 40. 48:
Կեղք 37:
Կեսարիա. 7. 9. 14. 21. 23. 24. 33. 38:
Կեսեղք, Կեսղէք, փէ՝ Կեղք:
Կոստանդիանոս 23. 40:
Կորնեթոս 14:
Կուառատուն, փէ՝ Կուառք:
Կուառ 36:
Կուառք 25. 26. 35. 36. 37. 43. 44:
Կրօնիդէս 8. 17. 18. 37. 41:

Հայք 8. 16. 17. 23. 27. 28. 29. 47:
Հաշտեանք 12. 25. 29. 37. 41. 44–46. 47:
Հալբ 13. 25. 28. 48:
Հելիթաղ 22:
Հելիթաղնեակ 22:
Հնդիկք 8:
Հուն 47:
Հուռեան 36:
Հուռեանք 36. 43. 44:
Հովեանք 38:
Հռոմ 11. 14. 16. 17. 23. 24. 49:
Հրեայք 49:

Ղեւոնդ 7. 23. 24:
Ղուկաս 14.

Ճենք 20. 22:

Մամիկոնեայք 8. 9. 13:
Մանծկերտ, կամ Մանազկերտ 40:
Մարիամ 22:
Մարկեղէս, փէ՝ Մարկեղիոս:
Մարկեղիոս 16. 17:
Մեղտէս 36:
Մեղտի 26. 28. 36. 37:
Մենանդրոս 14:
Մեսակէս, փէ՝ Մեսակէս:
Մեսակէս 29. 30:
Մեսակող, Մեսակողմ 30:
Մեհնունիք 48:
Միջագետք 14. 17:
Մկրտիչ, փէ՝ Յովհաննէս Կարապետ:
Մոկք 26. 30:
Մովսէս 10:
Մուշ 37. 38. 43:
Մուշեղամարգ 46:

Յակոբ սուրբ (Մծբնայ) 9. 22:
Յոյնք 16. 22. 40. 41:
Յոհաննէս աւետարանիչ 23:
Յովհաննէս Կարապետ 8. 10. 13. 15. 23. 24. 31. 33. 35. 38. 40. 48:
Յորդանան 8:

Նիկիմեդիա 22:
Նիւստրա 24:
Նիւստրացիք 12:

Ոգոհի 21:
Ողկան ամուրն 26. 43. 49:
Ուռհա, կամ Ուրհա 14. 22:

Պաղհաւ 20:
Պաղհաւայ դուռն 8:
Պալունիք 25. 36. 43:
Պատմոս 23:
Պարթեւ 20. 21:
Պարսք 20. 21:
Պարսախ 30:
Պարտաւ 20. 21:
Պիսիդոն սուրբ 33:
Պոլիկարպոս 24:

Ջուանշիր 22:

Ռեգէս 22:
Ռիստակէս 22:

Սգոն, թէ Յակոբ:
Սեբաստիա 24:
Սեղբեստրոս 23:
Սիմաքոս 17:
Սինա 10:
Սիւնիք 26. 27. 29. 30. 34. 35. 43. 44. 46. 48:
Սուրէն 21:
Սուրոխնոս 25:
Սոփի 21:

Վաղարշակ 36:
Վաղարշապատ 12. 23:
Վիշապ քաղաք 28. 36:
Վիրք 40–43. 48:
Վրթանէս 22:

Տարօն 12. 14. 16. 25. 36. 49:
Տաւրոս լեառն 8:
Տիմոթէոս 11. 14. 17:
Տիրակատար 28:
Տիրան 22:
Տում, Տումբ 37:
Տրդատ 12. 14. 16. 22. 23. 40–49:

Փայտակարան 35:
Փարաւոն 10:
Փարմէնոս 24:

Քարքէ 36: